№ 173 ԿԻՐԱԿԻ ՕԳՈՍՏՈՍԻ 28 1908 ԿԻՐԱԿԻ ՕԳՈՍՏՈՍԻ 28 № 173

ԵՐԵՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվանը 6 բուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Վերջին տեղեկութիւններ. Պարսից արտաքին գործերի մինիստրի հեռագիրը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կառավարչական հաղորդագրութիւն. Նամակ Արդահանից. Նամակ Կաղզուանից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Թիւրքիան և Գերական Դուման. Նամակներ Գաբսկաստանից.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. ՅՍԵՑԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ — Կոտորած Շուշում.

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Բագուից եկած վերջին հեռագրական տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ քաղաքն սկսել է խաղաղվել։ Թուրքերը նոր ներգործական փորձեր չեն անում, նրանք դիմել են գեներալ-նահանգապետին և յայտնել, որ իրանք պատրաստ են հաշտութիւն կայացնելու և իբր թէ հայերը չեն ցանկանում հաշտվել նրանց հետ։ Այդ խմաստով զեկուցված է և կովկասեան Փոխարքային։ Փոխարքան իր կողմից հեռագրով դիմել է Վեհափառ Կաթողիկոսին խնդրելով, որ նա յորդորէ Բագուի հայերին հաշտվելու։

Մենք մի վայրկեան անգամ չենք թոյլ տալիս, որ հայերը ցանկացած լինեն շարունակել անհաշտ դրութիւնը։ Մի՞թէ այդ կարելի բան է։ Հայերը, որ միշտ բողոքել են ընդհարումների, կոտորածների, խլրտումների, հրդեհների և աւերումների դէմ, միայն և միայն հանգստութիւն, խաղաղութիւն և կանոնաւոր կուլտուրական կեանք են ցանկանում։ Եւ ինչպէս կարող էին նրանք հաշտութեան դէմ լինել։ Այդ երբէք չէ կարող տեղի ունենալ։

Բայց ճիշդ է մի բան, որ հայերը չեն հաւատում այլ ևս հաշտութեան այն ձեւակատարութիւններին, որ սարքվում են այժմ թափորներ կատարելով և փողոցներում շրջելով։ Հայերը իրանք չեն յարձակվում և միայն մի պահանջ ունեն, որ Թուրքերը հաստատ և ամուր կերպով վճռել են զէնք չը բարձրացնելու հայերի դէմ։ Դա վստահութեան հարց է, որ կարելի է լուծել միայն գործով, միայն դադարելով յարձակողական դիրքի մէջ մնալուց։

Ի՞նչն ստիպեց փետրվարեան սոսկալի և դժոխային օրերից յետոյ նորից զէնք շարժելու հայերի դէմ։ Շաբաթ օր, օգոստոսի 20-ին, երբ տեղի ունեցաւ հայ-թուրքական ընդհարում, առաւօտից արդէն նկատելի է եղել մի իրարանցում Թուրքերի մէջ։ Ընդհարումը պատահել է երեկոյեան ժամը 5-ին, իսկ առաւօտեան բանկերում, դրամատներում Թուրքերի թիւը համեմատաբար քիչ է եղել և մի քանի խանութներ վաղ փակվել են, օրինակ, պարապետի մօտ։ Եւ առհասարակ նկատվում է եղել, որ Շուշու աղետալի դէպքերից յետոյ անմիջապէս յուզմունք է տիրել Բագուի Թուրքերին։

Այնուհետև յայտնի են եղելութիւնները։

Վարչութիւնը այս անգամ աշխատեց իր կոչման բարձրութեան վրա լինել։ Նա ամենաարագ կերպով զօրք դուրս բերեց և պահակախմբեր դրեց քաղաքի բոլոր մասերում։ Աւելի դժուար էր նաւթահանքերի շրջանին օգնելը։ Պահանջվեց զօրք, որը Բագու հասնելուն պէս ուղարկվում էր դէպի նաւթահանքերը։ Զօրքը ստիպված եղաւ նոյն իսկ Թնդանօթներ արձակել թէ Բագու քաղաքում և թէ Սաբունչիում։ Թնդանօթից քաղաքում վնասվել է Թաղիեվ եղբայրների (հասարակութեան մէջ սխալմամբ յիշում են Փիլիպոսեանցինը) տունը, իսկ Սաբունչիում գիւղական մի քանի տներ և նաւթարդիւնաբերողների խորհրդի հիւանդանոցի մի պատը։ Հիւանդանոցի ռմբակոծումը թիւրիմացութեան արդիւնք է։

Զաբրաթի նաւթահանքերում պաշարված դրութեան մէջ մնացել էին 1500—2000 մարդ, շրջապատված եռապատիկ աւելի մեծ թուրք զինված խուժանով։ Գեներալ-նահանգապետին լուր էին տուել, որ Զաբրաթի պաշարվածները լաւ զինված են և նրանց մէջ շատ կան յեղափոխական կազմակերպութիւններին պատկանողներ։ Յետոյ, երբ ամեն կողմից դիմումները են եղել և պարզել են պաշարվածներին սպառնացող վտանգը գեներալ-նահանգապետին, ուղարկել է մի բատալիոն զօրք, 300 կազակ և Թնդանօթ։ Տեղի ունեցած ընդհարումներից ենթադրում են, որ սպանվել է 150—200 Թուրք։

Նաւթահանքերի շրջանը ստանում էր խմելու ջուր Զուղուլբի ջրանցքից։ Հեռագիրները տեղեկացնում են, որ Զուղուլբի աղբիւրը մնացել է անվնաս, իսկ ջրանցքը կոտրատվել է մի քանի տեղերում։ Ջրանցքի նորոգութիւնը մեծ ժամանակ և լուրջ ծախքեր է պահանջում։

Բիբի-Էյբաթի մօտ գտնվող Շիխօվո Թուրք գիւղի բնակիչները, չը նայած իրանց տուած խօսքին, չը խառնվելու յուզմունքներին, թոյլ էին տուել իրանց մի շարք քստմնելի արարքներ։ Գեներալ-նահանգապետ Ֆադէեվ վճռել է նրանց ենթարկել զգալի պատժի։

Բիբի-Էյբաթի շրջանում գտնվող բանուորները տեղափոխվել են այժմ Բայիլով կոչված արուարձանը, մինչև որ կարելի լինի կամ նորից վերադառնալ իրանց տեղերը, կամ բոլորովին հեռանալ նաւթային շրջանից դէպի իրանց ծննդավայրերը։

Սպանվածների թիւը ճիշդ կերպով յայտնի չէ։ Ընդհանրապէս ենթադրում են, որ մօտ 400 հոգի սպանվել են Թուրքերից և մօտ 100 հոգի քրիստոնեաներից։

Քաղաքի մէջ աւերումներ քիչ են եղած։ Մենք հաղորդել էինք Սաֆարալիեվի ցերկի և նրա մօտ գտնվող փայտի պահեստի այրվելու մասին։ Բռնկվել են նոյնպէս Արութչեանի և Սուլթանովի տները, որոնցից վերջինն ազատվել է այրվելուց։ Թուրքերը փորձել են յարձակվել հայոց եկեղեցու վրա, որ գտնվում է Բերդաքաղաքում, բայց յետ են մղվել։ Զամբարաքենդում և Շամախու Թաղում սպանված են չորս ռուս։ Զամբարաքենդում սպանվել է մի հայ ոսկերիչ իր ընտանիքով։

Բագուի դէպքերի մասին տեղեկութիւններ տրված են Բագուից Վեհափառ Կաթողիկոսին ընդարձակ հեռագրով։

Բագուի նաւահանգստում գտնված նաւերից մի քանիսը պատրաստականութիւն են յայտնել ճգնաժամի միջոցին պատսպարելու իրանց դիմողներին նաւի վրա։ Եւ արդարև տեղի են ունեցել նաւերին դիմելու մի քանի դէպքեր։ Այդպիսի դէպքերից մէկի ժամանակ Թուրքերը նկատում են հայերի նաւ գնալը, վերցնում են նաւակներ և մօտ 30 հոգի զինված պատրաստվում են դէպի նաւ գնալու։ Ծովափում գտնվող ռուս պահակախումբը նկատում է այդ և յետ է դարձնում Թուրքերին։

Բանւոր ժողովուրդը ներկայումս աշխատում է, ով կարող է, փախչել Բագուից։ Թիֆլիսի կայարանը լիքն է Բագուից եկած բանւորներով Երևանեան նահանգից։ Նրանք հնարաւորութիւն չեն ունեցել ոչ իրանց շորերը փոխելու, ոչ լուացվելու։ Սարսափահար եղած, նրանք անվրդով չեն կարողանում պատմել իրանց հետ պատահած աղէկտուր և թշուառ դէպքերի մասին։ Շուշու և Զանգեզուրի գաւառի բանւորները ստիպված մնացել են Բագու, որովհետև ճանապարհները դէպի իրանց ծննդավայրերը ապահով չեն։ Հեռացած բանւորների թիւի հետ համեմատած շատ մեծ է Բագուում մնացողների թիւը և նրանք կարօտ են լուրջ օգնութեան։

Այդ կարիքի մասին արդէն խօսել ենք և դարձեալ նրա վրա ենք դարձնում մեր հասարակութեան ուշադրութիւնը։

Զանգեզուրի շրջանից ստացած տեղեկութիւնները սոսկալի են։ Կարող ենք յայտնել և այն, որ այդ գաւառի վրա հսկողութիւնը յանձնված է Երևանի գեներալ-նահանգապետ պրինց Նապոլէոնին։ Փոխարքան հրամայել է աչալուրջ կերպով հետևել այնտեղի եղելութիւններին և ճնշել ընդհարումները։ Ի միջի այլոց պրինցի ուշադրութիւնն է հրաւիրված պրիստաւ Սադրէդդի յանցաւոր ու զրգռիչ գործունէութեան վրա Մինքեանդի աւերման ժամանակ։

Զիբրայելի գաւառից ստացած տեղեկութիւնները վերին աստիճանի յուզիչ են։ Վանքի և Հադրութի շուրջը եղած գիւղերը ենթարկվել են Թուրքերի աւերին։ Սկսած օգոստոսի 22-ից շարունակվում են ասպատակութիւններ, որոնք սպառնում են շատ լուրջ հետևանքներ առաջացնել։ Վտանգի մէջ է և սահմանապահ զօրքի շտաբը։ Թուրքերը ներկայումս խմբված են Հադրութից հինգ վերստ հեռու։ Նրանց դէմ ուղարկված է մի վաշտ։ Թուրքերի մէջ նկատվել են սէյիդներ կանաչ դրօշակներով։ Մասնակցում են պարսկական ափից մեր կողմը անցած հրոսակներ։ Շարժումը կրում է շատ լուրջ կերպարանք և տեղական սահմանապահ զօրքը սպասում է խիստ ընդհարման։

Զիբրայելի գաւառի Վանք աւանից հայ հին զինուորները դիմել են Բարձրագոյն իշխանութեան մի խնդիրքով, որի մէջ յայտնում են թէ նրանք հինգ տարի ծառայելուց յետոյ, այժմ ակամատես են թէ ինչպէս նրանց մայրերը, քոյրերը, եղբայրները զոհ են դառնում կոտորածների և անարգանքների, ուստի խնդրում են տալ նրանց միջոցներ պաշտպանելու իրանց սերձաւորներին։

Վերին Ագուլիսից դիմել են հեռագրով Փոխարքային՝ խնդրելով թոյլ տալ կազմելու տեղական կամաւորներից պահակախմբեր ռուս օֆիցերների ղեկավարութեամբ։

Պարսից Շահի գալստեան առիթով վաղը, օգոստոսի 29-ին, Հաջի-Կաբուլ կայարանում նրան կը ներկայանայ հայ հոգեւորականութեան և աշխարհական ներկայացուցիչների կողմից մի պատգամաւորութիւն, յայտնելու, որ հայերը մինչև այժմ հաւատարիմ են մնացել իրանց խաղաղասէր ոգուն, շնորհակալ են Շահի հովանաւոր պաշտպանութեան դէպի հայերը և լիայոյս են, որ Շահը ապագայում հովանաւոր կը լինի պարսկահպատակ հայերին։ Պատգամաւորութեան անդամներն են Նահապետ եպիսկոպոս և Զաւէն վարդապետ։ Աշխարհական ներկայացուցիչներն են Մ. Դոլուխանեան, Ե. Ալիխանեան և Հ. Առաքելեան։

Այդ պատգամաւորութիւնը շատ կարևոր է, որովհետև Թիֆլիսից, Բագուից և Անդրկովկասի ուրիշ տեղերից անդադար յուզիչ հեռագիրներ են ուղարկվում Թեհրան և Թաւրիզ, նկարագրելով հայերին իբրև չարամիտ նպատակներ ունեցող և նախայարձակ եղող մարդիկ։ Վեհափառ Կաթողիկոսը յատուկ հեռագրով, որ ուղարկել էր Մուշիր-Դովլէին, հերքել էր հայերի վրա բարդած մեղադրանքները։ Բայց Մուշիր-Դովլէն նորից հեռագիր էր ուղարկել Վեհափառին, յայտնելով երկիւղ առաջիկայի մասին։ Աչքի առաջ ունենալով այդ հանգամանքը, Թիֆլիսի հայ մամուլի և հասարակութեան մի մասի կողմից ուղարկվեց Մուշիր-Դովլէին հեռագիր իրերի վիճակի մասին։

Մեզ տեղեկացնում են, որ Պարսկաստանի մէջ ևս կան մեր երկրից գնացած մարդիկ, որոնք աշխատում են որոգայթներ լարել հայերի դէմ և տալիս են վրդովեցուցիչ լուրեր Պետերբուրգ, ցոյց տալով հայերին իբրև Ռուսաստանի հակառակորդներ։ Այդ ինտրիգների հեղինակները մի բան չը պէտք է մոռանան, որ հայերի և Թուրքերի մասին հայեցակէտերը ներկայումս սկսում են հիմնվել փաստերի և իրական երևոյթների ուսումնասիրութեան, ոչ թէ բամբասանքների վրա։

Մեզ լուրեր են հասնում զանազան տեղերից, որ փորձեր են անվում սիւնի մահմեդականների մէջ յուզմունքներ առաջացնելու։ Դաղստանի շրջանում մինչև այժմ շարժումներ չը կան, բայց երկիւղներ են առաջացել, որ մի գուցէ խռովարարների ջանքերը վերջապէս աջողութիւն ունենան։

—

Բիբի-Էյբաթ, 25 օգոստոսի, 7 ժ. 12 ր.

Ահա երրորդ օրն է, որ հրդեհում են Բիբի-Էյբաթի նաւթահանքերը։ Այրվել է բոլորը։ Հրդեհը շարունակվում է։ Հանգցնելու ոչ մի միջոցի չեն դիմում։ Բացի Թուրքերից, մնացած բոլոր ազգաբնակութիւնը տեղափոխվեց Բայիլով։ Դրութիւնը չէ բարւոքվում։ Կողոպուտը և աւերը շարունակվում են։

—

Բիբի-Էյբաթ, 25 օգոստոսի, 7 ժ. 53 ր.

Բանւորների կազարմանները, կօշեգարները և բնակարանները ոչնչացված են հրդեհից։ Բայիլովի բոլոր տները և բակերը լցված են Բիբի-Էյբաթից տեղափոխված մարդկանցով։ Անհնարին է նկարագրել վիճակը։ Սպանվածների թիւը քիչ է։

—

Բագուից, օգոստոսի 26-ին, ցերեկվայ 12 ժամ 32 րոպէին մեզ հեռագրում են.

«Սովալուկ բանւոր ազգաբնակութիւնը —հայերը, ռուսները և վրացիք հազարներով Բալախանիից տեղափոխվում են քաղաք։ Մահմեդականները կողոպտել կամ այրել են այդ թշուառների գոյքը։ Մանթաշեվի, Փիթօեվի և Խաչատուրովի նաւթահանքերից իշխանութիւնները, զինաթափ անելով հայ ազգաբնակութիւնը, տեղափոխեցին քաղաք։ Բիբի-Էյբաթը դեռ ևս այրվում է։ Օգոստոսի 20-ից, ցերեկվայ 4 ժամին, յայտարարեցին զինադադար, բայց երկու ժամից յետոյ քաղաքի զանազան մասերում Թուրքերը հրացանաձգութիւն արին վեց հայերի։ Մահմեդական դօրդօվոյների ցուցմունքով զօրքերը կրակ բացին հայերի մի քանի տների վրա։ Քաղաքում Թուրքերը հրդեհում են հայկական տները։ Նորից զօրքեր եկան։ Յոյս կայ շուտափոյթ խաղաղացման վրա։

«Кавказъ» լրագրի հեռագիրը օգոստոսի 20-ից տնդենցիոզ սուտ է։

—

Բագու, 26 օգոստոսի, 2 ժ. 37 ր.

Բագուի «Ռուսաց գործակալութեան» ագենտներն են Թօփչիբաշեվ և Մելիքովայդ պատճառով այժմս պարզ են վերոյիշեալ գործակալութեան տենդենցիոզ հեռագիրները։

—

Բագու, 26 օգ., եր. 6 ժ. 46 ր.

Խաղաղութեան կրկնակի յայտարարութիւնը չը հանգստացրեց բնակիչներին։ Քաղաքի զանազան մասերում դեռ տեղի են ունենում հատ-հատ սպանութիւններ և հրդեհներ»։

—

Բագուի Մարդասիրական ընկերութեան Խորհրդի Նախագահ պ. Սամսոն Յարութիւնեանցը ստացել է Բագուից հետևեալ հեռագիրները.

Բագու, 25 օգ., ցերեկ. 5 ժ. 11 րոպէ

Օգոստոսի 20-ին Թուրքերը յանկարծակի սկսեցին հրաձգութիւն հայերի դէմ։ Երեկոյեան մօտ շրջակայքից եկան Թուրքեր, սկսվեց ուժգին հրաձգութիւն Թուրքերի և զօրքերի մէջ։ Երէկ քաղաքով անցնում էր խաղաղութեան թափորը։ Երեկոյեան Թուրքերը նորից յարձակվեցին հայերի վրա. եղան սպանութիւններ։ Քաղաքում և Քըշլիում այրված են հայոց տները։ Բալախանում և Բիբի-Էյբաթում այրվեցին բոլոր վիշկաները, չէ մնացել նոյն իսկ մի հատ։ Բալախանու հայերը, որոնց զինաթափ էր արել ոստիկանութիւնը, այսօր եկան քաղաք։ Ազգաբնակութիւնը քաղցած է։ Այսօր նոյնպէս անցնում էր խաղաղութեան թափորը։ Դրանից յետոյ սպանեցին երեք հայերի Մէլիքովի տանը, Նաբերեժնայա փողոցում։

—

Բազու, 26 օգ., 10 ժ. 5 ր. գիշերվայ

Երէկ կայացաւ հաշտութիւն. գիշերը երեք տեղերում այրեցին հայոց տները։ Վնասվածները օթևան են որոնում Հայոց Մարդասիրական ընկերութեան տներում։ Անհրաժեշտ է շուտափոյթ նիւթական օգնութիւն։

Օգոստոսի 27-ին Թիֆլիսի Յանձնաժողովի միջոցներից փոխադրվեց Բագու, Մարդասիրական Ընկերութեան Խորհրդին, 500 ռուբլի։

—

Բագու, 27 օգոստոսի

Փողոցներում դատարկութիւն է տիրում։ Խանութները և բանկերը դեռ չեն բացվում։ Քաղաքում խաղաղ է կարգի կողմից։ Զօրքերը եկան նորից։ Տրամադրութիւնը դեռ անհանգիստ է։ Երկիւղ են կրում, որ մի գուցէ դարձեալ վըտանգներ առաջանան մի որ և է դէպքից։ Լուրջ պաշտպանութեան կարօտ է Սև քաղաքը։

—

Ազդակից Փոխարքայի օգնականին՝ գեներալ Տակաիշվիլիին հեռագրում է օգոստոսի 23 ին։

«Երկու բատալիոն և երկու հարիւրեակ այսօր հասան Շուշի. մի բատալիոն և մի հարիւրեակ ինձ հետ միասին այսօր հասան Ազդամ։ Եւլախից մինչև այստեղ ճանապարհին պէտք եղաւ հանգստացնել թուրք ազգաբնակութիւնը, որը յուզված էր այն պատճառով, որ խաղաղութիւն կապելուց յետոյ հայերը դեռ շարունակում են դրաւած պահել Ասկեարանի կիրճը և շրջակայ բարձունքը, կրակ անելով անցնող թուրքերի և նոյն իսկ շեյխ-ուլ-իսլամին ուղեկցող ձիաւորների վրա։ Այսօր ճանապարհին ես հանդիպեցի զինված թուրքերի խմբեր, սպանվածներով և վիրաւորներով։ Ինչպէս երևաց, լոյս 22-ի գիշերը կիրճում ընդհարում է տեղի ունեցել բազմաթիւ զոհերով։ Ազդամ հասնելով, անյապաղ մի զօրամաս ուղարկեցի բռնելու Ասկեարանի կիրճի հիւսիսային մուտքը, իսկ մնացած զօրքի հետ առաջ շարժվեցի, հետս վերցնելով եօթ օրվայ պաշարը, ալիւրով բեռնաւորված ֆուրգոնները, նոյնպէս և այն բոլոր բնակիչներին, որոնք վախենում էին գնալ Շուշի, որովհետև Ասկեարանից Խանքենդի ճանապարհը փակված էր»։

—

Շուշի, 25 օգ., 2 ժ. 20 ր. ցերեկվայ

Այսօր զինուորական նահանգապետը հրաւիրեց հայերին, մահմեդականներին ընդհանուր խորհրդակցութեան, որպէս զի միջոցներ ձեռք առնվեն վերջնական խաղաղացման համար։ Եռանդուն ճառի մէջ ցոյց տալով, որ հայերը միայն պաշտպանվում էին և ահագին նիւթական վնաս կրեցին, հրաւիրեց ամենքին անյապաղ միջոցներ ձեռք առնել դադարեցնելու անկարգութիւնները դաւառներում։ Նահանգապետը խնդրեց հանգստացնել ազգաբնակութիւնը, սանձահարել անհանգիստներին, նախազգուշացնելով, որ խաղաղութիւն խանգարողները կենթարկվեն խստագոյն պատժի։ Գեներալ Տակայշվիլու գալուց յետոյ քաղաքում կատարեալ հանգստութիւն է։ Ցոյս ունեմ, որ նրա օգնութեամբ շուտով կը հանգստանան գաւառները։ Ամարաս, Վարանդա կօզակներ են ուղարկված։

Առոս եպիսկոպոս

ԳԱՐՍԻՑ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐԻ ՀԵՌԱԳԻՐԸ

—

Մի քանի օր առաջ Թիֆլիսի հայ հասարակութիւնից մի խումբ անձինք, իմանալով որ չարամիտ անձինք պարսից կառավարչական բարձր շրջանների մտքերը պղտորելու նպատակով զանազան ստայոյ հեռագիրներ են ուղարկել և պարսից արտաքին գործերի մինիստր Մուշիր-Դովլան, հիմնվելով այդ լուրերի վրա, հեռագիր է ուղարկել Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսին, որ նա հանդարտեցնէ հայերին, պարտք էին համարել մի ընդարձակ հեռագրով պարզել Մուշիր-Դովլային իրերի իսկական վիճակը։

Այժմ ի պատասխան այդ անձանց հեռագրի, Թիֆլիսի պարսից ընդհանուր հիւպատոսարանը ուղարկեց «Մշակի» խմբագրութեանը Մուշիր-Դովլայից հետևեալ հեռագիրը.

«Ես հաճութեամբ ստացայ ձեր հեռագիրը, որի մէջ երջանիկ եմ կարդալու համակրութեան և համերաշխութեան զգացումներ։ Պարսից կառավարութիւնը միշտ գոհ է եղել Պարսկաստանի հայերի վարմունքից և այն եղանակից, որով ապրել են նրանք մինչև այժմ պարսիկ հպատակների հետ արտասահմանում. ուստի մեծ է մեր զարմանքը, լսելով այժմ Բագուի հրէշաւոր գործողութիւնների լուրը։ Ա. գիտասօրները և գրգռիչ-գործակատարները (agents provocateurs) կը դատվեն համաձայն իրանց գործի։ Այժմ ձեզ է պատկանում, իբրև ազդեցիկ մարդկանց, կանգնեցնել ձեր դաւանակիցներին բարի ճանապարհի վրա և նրանց խորհուրդ տալ ներողամտութիւն և եղբայրասիրութիւն, որոնք հարկաւոր են միմեանց կողքին ապրող հասարակութիւններին։ Ես արդէն հեռագրել եմ Նորին Սրբութիւն ձեր Հոգևոր Պետին, որ նա գործ դնէ իր ազդեցութիւնը խաղաղութիւն բերելու, մի և նոյն ժամանակ պարսից կառավարութիւնը ամենախիստ միջոցներ է ձեռք առել թոյլ չը տալու համար հակահարուածներ մեր երկրում։ Մեր հիւպատոսները Կովկասում համանման հրամաններ են ստացել։ Ցոյս ունեմ, որ դուք և ձեր լուսամիտ դաւանակիցները գործ կը դնէք ձեր ջանքերը մի և նոյն նպատակով ձեռք բերելու համար եղբայրասիրութեան նախկին զգացումները։

Մուշիր-Դովլէ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

—

Կառավարութիւնը իր մշտական հոգսերի մէջ զարգացնելով Ռուսաստանում բարձր կրթութիւնը, արդէն վաղուց ուշադրութիւն է դարձրել համալսարանների և ուրիշ բարձր կրթական հաստատութիւնների անբաւարար վիճակի վրա։ Այդ անբաւարարութիւնը արտայայտվում էր զանազան տեսակ, իսկ վերջին տարիները ուսանող երիտասարդութեան մէջ ծագած խռովութիւններով, որոնք ընդհատում էին ուսման կանոնաւոր ընթացքը։ Ընդունելով որ անկասկած այդ խռովութիւնները կապ ունէին ռուս հասարակութեան մէջ եղած ընդհանուր խմորման հետ, ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը այնու ամենայնիւ չէր կարող չը նկատել, որ բարձր կրթական հաստատութիւնների կազմը շատ քիչ է յարմարեցրած կեանքի հասունացած պահանջներին։ Դանելով, որ շատ անկատարելութիւններ ներկայ կանոնների մէջ դժուար է հեռացնել և ինչպէս ցոյց տուեց փորձը, մինիստրութիւնը դեռ 1901 թ.-ին ենթադրում էր ձեռնարկել բարձր կրթութեան արմատական բէֆորմին, մինիստրութիւնը առաջարկեց համալսարանների և ուրիշ բարձր կրթական հաստատութիւնների խորհուրդներին և վարչութիւններին յայտնել իրանց դատողութիւն-

բանի կողմից թուրքերն արդէն սկսել են կոտորածը։—Սկված է, սկված է... անցնում է բերանից բերան։ Իրարանցում, սարսափ, ճղաւոց-բղաւոց, լաց ու կոծ—մեծ, փոքր, մարդ, կին, երեխայ իրար վրա թափվելով՝ վազվզում են. տրաք, տրաք և Թօփխանայում. մարդիկ խանութները փակելու չեն համբերում, շատերը դուրս են փախչում ոտաբոբիկ, գլխաբաց. գնդակները զզզում են այս ու այն կողմ. մի մարդ թաւալվեց ոտներիս առաջ, չիմացայ հմ էր, թէ թուրք. նայելու, օգնելու բոլորովին չը կար։ Տուն հասանք։ Եւ այս բոլորը կատարվեց 10 րոպէում։

Քանի՞ հայեր են թուրքի բազարում և թաղերում, վաճառական, դերձակ, որմնադիր, դուրգեար, մշակ, հանգիստ իրանց գործին—թիւը 2—300 են հաշուում. իսկ քանի՞ թուրք բաղկաներ ու մսագործներ հայերի մասում շատ քիչ, մի երկու տասնեակ։ Ի՞նչ է դրանց դրութիւնը... սկված է սարսափելի հրացանագութիւն։ Հայ և թուրք իրանց սահմաններում դիրքեր բռնած կուում են։ Գնացին կօզակներ և զինուորներ։

—

Երեկոյ. 11 ժ.

Թուրքերի մասից հայերը ոուն չէին դարցել. կոտորվածն են, թէ՞ կենդանի—յայտնի չէ։ Աղաբէկենց ձորում ընկած են թուրքերի դիակներ, իսկ ներքի կամուրջի վրա թափված են հայերի դիակներ։ Թիւը որոշել անհնար է. ենթադրում են, երկու կողմից հարիւրից աւել։ Գնդակների արշաւանքը դադարեց։

—

17-ին, առաւօտ. 7 ժամ.

Գիշերը լուռ էր։ Առաւօտեան սկսվեց հրացանաձգութիւն։ Ամենահետաքրքրականը թուրքերում մնացած հայերի դրութիւնն է։ Լուրերը կցկտուր են։ Ասում են, որ նրանք պահված են թուրք մեծերի տներում կենդանի. բայց ըսպանվածներ շատ են եղել։ Հայերի մօտ, շատ տներում, ապաստան են գտել բաւականին թուրքեր, որոնք քէփից և ուրիշ տեղերից դարձած անցնելիս են եղել հայերի թաղում։ Գիշերը եղել են հաշտութեան բանակցութիւններ հայ և թուրք հոգևորականութեան մէջ։ Հետևանքը—ապարդիւն և կոտորում են իրար։ Կանայք բոխչաները ձեռքերին այս ու այն կողմն են վազում...

—

Առաւ. 10 ժ.

Դեռ չէ դադարել հրացանաձգութիւնը. ըսպանված է 2 կօզակ։

—

Օգոստոսի 17 ին երեկ. 6 ժամին

Ամբողջ օրը կատաղի, արբած դրութեան մէջ էինք։ Դեռ չենք սթափվել, դեռ ցաւերս ու վշտերս չենք զգում։ Գազանացած, քարացած են բոլորի սրտերն ու ջղերը։ Մահհրաւէր, կատաղի կրակ է. կրակում են հրացանից, ռէվոլվերից, ռուսբից։ Երեկոյեան ժամը 4—6 ուղղակի անդադրում ճռռոց է։ Ընդմիջումներ շատ քիչ եղան։ Հրդեհված է Թափրեանցի գործարանը քաղաքի դրսում։ Հրդեհված են զօրանոցի առաջ Թուրքերի տները, Թուրք Աբբաս-բէկի տունը, Հաղլաթեանցի և Քոչարեանցի տները։

—

Երեկ. 9 ժամին

Մի ժամ առաջ եկաւ նահանգապետը։ Քաղաքի պաշտպանութիւնը յանձնված է զինուորական գլխաւորին։ Նահանգապետի մտնելուց իսկոյն դադարեց հրացանաձգութիւնը և վերսկսեց այս րոպէին։ Կրակում են զօրանոցի կողմից. քաղաքի վերին դռնից ուզում էին ներս խուժել Զառսլուի թուրքերը, բայց յետ մղվեցան։ Տխուր գիշեր է։ Տներում ճրագ շատ քիչ է երևում։ Փողոցներում լապտեր չը կայ։ Դիրքերից մէկ-մէկ հրացան են արձակում իբրև ազդանշան։ Նահանգապետը հաշտութեան բանակցութիւններ սկսեց։

—

18-ին, առաւ. 7 ժ.

Զօրանոցի առաջ ծածանվում է կարմիր դրօշակ—հաշտութեան առաջարկութեան նշան։ Հայերը դրօշակը տեսնելով իսկոյն լռեցին, բայց թուրքերը շարունակում են կրակել։ Ամենավերջին տեսակի հրացաններ ունեն ասնիրաները—Բրաուընինգ, դում-դում, Մաուզեր, որոնց գնդակը շվվալով ու ծկլթալով անցնում է քաղաքի միւս ծայրը։ Նահանգապետը կարգադրել է—որ կողմը չը համաձայնվի հաշտութեան՝ զօրքի գնդակն ուղղել դէպի այդ յամառող կողմը։

Բոլոր պարապմունքները դադարած են։ Ժամ չը կայ։ Բազար բնաւ։

—

Առաւ. 8 ժամին

Սարսափը սաստկանում է։ Թուրքերը բարձրացել են մինչև Ագուլեաց եկեղեցին և Բամու Ջաղացի տակերը։ Այդ տեղերի տնուորները փախչում են քաղաքի ներսը։ Զօրք դնաց օգնութեան։ Նահանգապետի հայերին լռեցնելը Թուրքերին կատաղի դրութեան մէջ դրեց...։ Զորս հինգ տեղ տներ են մնում. Ղումլուղի Թաղում հրդեհված են գրեթէ բոլոր հայերի և Թուրքերի տները. ծուխը ամպի պէս կարել է արեգակի առաջը։

Հայերը մի ժամ լռելուց, սկսեցին, իրանց խաբված զգալով։ Թուրքերի Թաղում երևում են անթիւ ձիաւորներ. անկասկած է, որ դրսից հազարաւոր Թուրքեր են թափվել քաղաք։ Սաստկացել է յատուկ ճռռոցը հրազէնների։ Թուրքերը յետ նահանջեցին Բամու Ջաղացի տակից։ Կուի բնաւորութիւնը ճիշտ պատերազմական է։ Սկված է Թալան երկու կողմից։ Ա՜խ, որքան ես դատապարտում եմ հրդեհը և աւարը։

—

Առաւօտ. 12 ժ.

Այսօրվայ կռիւը ամենից կատաղին է։ Դեռ չէ դադարել կրակոցը։ Երկու կողմից զոհեր են ընկնում. հաշիւ տալ չէ կարելի։ Կուի սաստկութիւնն անցաւ Ագուլեաց եկեղեցու տակը։ Այրվում են Խունոնցի, Բաժալեանցի և ուրիշ բազմաթիւ տներ։ Եկեղեցին դատարկում են։ Մի ժամվայ մէջ Թուրքերին իջեցրին և Ագուլեաց եկեղեցու տակից։ Հրդեհի ծուխը պատել է քաղաքը. մթնեց է Թափվում։ Հայերը չը հրդեհեցին պարսից Շահի ազգական Ռիզա-Կուլի-Միրզայի տները։

Ի՞նչ է անում նահանգապետը, այդ մասին տեղեկութիւն չունեմ. իրականութիւնը իմ նկարագրութիւնն է։ Դրութիւնն աւելի սոսկալի է, քան երէկ, մէկէլ օրը։ Գիւղերից հայերը մտել են Ռուսի եկեղեցու առաջ. Թուրքերը քաշվում են իրանց Թաղի ներսը։

Հաստատում են, որ հաշտութիւն չընդունողը Թուրքերն են։

—

Երեկ. 2 ժ.

Թուրքերը բարձրացան Խանդամիրեանցի Թատրոնի առաջ. այրվում են այնտեղի տները։ Ղազանչեցոց եկեղեցին վտանգի մէջ է։ Թուրքերը կուում են Թատրոնի առաջից և բարձրանում դրօշակը ձեռներին, «Ալլահ» ըղավելով։ Ասում էին ժամը 9-ին հաշտութիւն է, հիմա էլ 4-ին են ասում։ Ի՞նչ յամեցումներ է՝ չենք հասկանում։

ները այդ առարկայի մասին. ապա իբրև նիւթ ծառայեցին մինիստրութեան մօտ բարձրագոյն հաստատված յանձնաժողովի մասնակցելու հրաւիրված էին թէ ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան ենթակայ բարձր դպրոցների ներկայացուցիչները։ Այդ ձևով հաւաքված նիւթերի հիման վրա մինիստրութեան կենտրոնական վարչութիւնը կարողացաւ դիմել բարձր դպրոցների ծրագրի կազմման հետ միասին։ Անցեալ ակադէմիական տարվայ անկարգութիւնները, որոնք ընդհատեցին զբաղմունքները գրեթէ բոլոր բարձր դպրոցներում, ցոյց տուին որ անհրաժեշտ է բէֆորմներ մացնել նրանց և մանաւանդ համալսարանների մէջ անյապաղ։ Այդ պատճառով ժողովրդական լուսաւորութեան մինիստրը այս տարվայ յունիսին խնդրեց Բարձրագոյն հաճութիւն կազմել մինիստրութեան մէջ իր նախագահութեամբ մի առանձին յանձնաժողով կազմելու համար բարձր կրթական հաստատութիւնների հիմնական կանոնադրութիւնը։ Այդ յանձնաժողովի աշխատութիւնները, որ անհրաժեշտ է համարել հիմնել բարձր դպրոցների և բարենորոգութեանը ներքին ինքնավարութեան սկզբունքների վրա, այժմ աւարտված են։ Համաձայն մինիստրի զեկուցման այդ մասին Թագաւոր Կայսրը օգոստոսի 3-ին բարեհաճեց հրամայել կազմել առանձին խորհրդակցութիւն այդ առարկայի մասին վարչութիւնների գլխաւոր պետերից։ Այդ խորհրդակցութիւնը եկաւ այն եզրակացութեան, թէ պէտք է ենթարկել Նորին Կայսերական Մեծութեան բարեհայեցողութեան, որ անհրաժեշտ է պատուելի ժողովրդական լուսաւորութեան մինիստրին, ի նկատի ունենալով իրանց պրոֆէսորական կոլլէգիաների զեկուցումները, ամենակարճ ժամանակում աւարտել համալսարանների նոր կանոնադրութեան կազմումը վերոյիշեալ հիմունքներով, այն է՝ ընդունել բարենորոգութեան իբրև հիմք՝ հնարաւոր ինքնավարութիւն տալ պրոֆէսորական կազմին բարձր դպրոցի կառավարութեան գործի մէջ, II) պրոֆէսորների կոլլեգիայի անկախութիւնը և հեղինակութիւնը պահպանելու նպատակով անյապաղ մշակել բարձր դպրոցների կառավարութեան հաստատուն ժամանակաւոր կանոնները և ներկայացնել այդ կանոնները Բարձրագոյն հայեցողութեան։

ՆԱՄԱԿ ԱՐԴԱՀԱՆԻՑ

—

Օգոստոսի 23-ին

Այսօր, ամսիս 21-ին, պատարագից յետոյ նախկին ծխական իսկ վերջերս հասարակական ուսումնարանի դահլիճում Տէր-Էմմանուէլ քահանայ Դէմիրջողլեանցի նախագահութեամբ ծխականների ժողով կայացաւ։ Նախ Տէր-հայրը կարդաց հոգևոր կառավարութիւնից ստացած հեռագիրը, որով առաջարկվում էր գործակալ քահանային պատրաստութիւններ տեսնել ուսումնարանը բանալու 1874 թւի օրէնքի համաձայն, իսկ յետոյ առաջարկեց հոգաբարձուներ ընտրել։

Երբ հեռագիր ստացվեց եկեղեցական կալուածների վերադարձման և ուսումնարանների վերաբացման մասին, ամբողջ ժողովրդի ուրախութեանը չափ չը կար, բոլորը խանութները փակել էին ամբողջ օրը և ուրախութիւն էին անում, իսկ այսօր 250 ընտրողներից, 70 հոգի էին ներկայ ժողովին։

Գաղտնի քուէարկութեամբ հոգաբարձու ընտրվեցին նախկին ծխական ուսումնարանների ուսուցիչ պ. Սեդրակ Տէր-Գրիգորեանը պ. Ստեփան Վարդապետեանը, իսկ պ. Նիկողայոս Առվանեանը անձնափոխանորդ։ Հոգաբարձութեան վրա պարտականութիւն է դրվում շուտով ներսիսեանաւարտ կամ ճեմարանաւարտ ուսուցիչ և մի լաւ վարժուհի հրաւիրել. աշխատել միւս տարվայ համար ուսումնարանին յարմար շէնք գտնել. այժմեանը շատ անյարմար է։

Բերքը Արդահանի ամբողջ շրջանում չը տեսնված լաւ է։

Նոր էի վերջացնում նամակս, երբ իմացայ, որ երկու պատգամաւոր են ընտրել քաղաքից Կարս գնալու համար, որոնք պէտք է մասնակցեն ղեմավային ընտրութիւններին։

Գ. Դէմիրջեան

Հրդեհի վայրն անցայ։ Այրվում են Թամիրեանցի, Աբբրումեանցի տները իրանց շրջակայքով։ Եթէ շարունակվի՝ հրդեհի լափը կանցնէ Թոփխանա։ Խանութները դատարկվում են, բայց ոմն է իր ապրանքի տերը։ Մուխը խեղդում է մարդու։

—

Երեկ. 3 ժամ.

Հրդեհի հրեղէն լեզուները մարդուս կատաղեալ գժութեան են հասցնում։ Բազուի աղէտը որա մօտ սուտուր է. գոնէ այսպէս են ասում ականատեսները։ Կանայք ու երեխաներ գժուածի պէս մի մի իր ձեռներին՝ այս ու այն կողմն են վազվզում. ուր—իրանք էլ չը գիտեն։ Բանիսները մատն մեր բակը. չը դադարեցին, չը հանգստացան և դուրս գնացին. խնդրում էինք մնալ մեզ մօտ.—չէ, այստեղ էլ ապահով չէ, վո՛ւյ, քեզ մատաղ, ազգոցը անցնում է գլխովս։ Եւ փախչում են...

—

Երեկ. 3 ժ. 20 ր.

Հիւսէին-աղա Ջիվանշիր իր մարդկանցով, որ պատանդ էր պահված հայերի մօտ, հայ քաջերով առաջնորդարան տարվեց։ Միւս բռնված Թուրքերը ևս տարան նրա ետևից։ Բերվեցան և Թուրքերի մօտ բռնված հայերը։ Նահանգապետը, գաւառապետը, առաջնորդը և պատանդ հայերն ու Թուրքերը ժողովրդի ներկայացուցչութեան հետ գնացին Ռիզա-Կուլի-Միրզայի տունը հաշտութիւն կնքելու։ Այնտեղ պիտի գան զաղին և Թուրք մեծերը, բայց ժամը 5 է և դեռ զաղի չը կայ։ Հրացանաձգութիւնը շարունակվում է և հրդեհը բարձրանում։ Լուր հասաւ, որ Աղդամից 300 ձիաւոր Թուրքեր են եկել։

—

Երեկ. 7 ժ.

Երեք ժամ է սպասում ենք. հաշտութեան կաբինետից հազիւ վճիռ արձակվեց—հաշտութիւն... բայց չէ դադարում հրացանաձգութիւնը։ Հրդեհը հասել է Մէթայէլ-խանի տները և այրվում է։ Շուշին ձեռից գնաց. հայերը միլիոնների վնաս կրեցին։ Արշակ Մելքումեանցի խանութից սկսած, Անանեանցի տան ուղղութեամբ, թեք կերպով կտրած մինչև Խանիաղկայ աղբիւրը, և Բաքա Հախումեանցի տանից մինչև հին հանգստարանի արևելեան ճակատը և Ս. Աղամալեանցի (մէյդանի ներքին ճակատի) տանից մինչև Թուրքերի Թաղը բոլորը այրվում է։

—

Դիշերվայ 12 ժամին

Անցայ հրդեհի վայրը։ Օգնող չը կայ։ Տների արանքները չեն քանդում, որ հրդեհի առաջն առնեն։ Տեսայ իր այրվող տան դիմաց կանգնել է փաստաբան Ալէքսան-բէգը և ելեխայի պէս հեկեկում է։ Իշայ Բօրժօմ հիւրանոցի առաջ—մարդ չը կայ. Թուրքերի գընդակները տղղալով անցնում են և դեռ չեն դադարել։ Հրդեհը ցածանում է ներքև, դէպի Թուրքերի Թաղը, բայց նրանք առաջը կարել են, կօզակներ անցան, երևի Թուրքերին զսպելու. հարցրի, ոչինչ չը պատասխանեցին։ Վերադարձայ ժամի 1-ին։ Կրակի ծովացած լաւան, ինչպէս վաղորդեան արեգակ, լուսաւորել է ամբողջ քաղաքը։ Մեր տանը ապաստանվածները թափթփված են երկաթուղու կայարանում գնացքին սպասող ճանապարհորդների նման, միայն այն զանազանութեամբ, որ սրանց ձեռներին կապոցներ չը կան և հրդեհից փախել են, ամեն մէկն իր երեխաներին հազիւ փրկելով։ Իսկ մեր տանեցիք մի մի կապոց բռնած սպասում են հրդեհի մօտենալուն, որ փախչեն. ուր—չեմ հասկանում. բարկացայ ու հանգստացրի։ Դիշերը չենք քնում. աղամարդիկ Թուլացած ընկած են արբածի նման, երեխաները կիսաքուն, իսկ կանայք խենթի պէս զրոյցներ են ասում։ Ժամը 4-ն է, մի կողմից անողորմ հրդեհն է, միւս կողմից անգութ խուժանի հրացանների ճռռոցը։—Հաշտութիւնը անուանական է...։

—

Օգոստ. 19, առաւ. 7 ժ.

Դուրս եկայ տանից, անցայ Թոփխանան. հայի բազարի 3/4 այրված է մէյդանից ցած։ Կրակը նստած է. տների պատերը մնացել են ցից-ցից, իսկ շատերը Թափվում են։ Փողոցի միջով անցնելիս տաքանում է ոտների տակը, իսկ հրդեհի հովը Թոնրի պէս այրում է երեսս։ Մարդ չը կայ. աւեր ու աւերակ է։ Այրված կտրված են հեռագրի փայտերն ու լարերը։ Քար սրտի տէր մարդն անգամ տեսնելով այս աւերածութիւնները՝ էլի մի զոյգ կաթիլ արտասունք կը գլորէ աչքերից։

Հարկաւոր է օգնութիւն. խօսքը շատ անզօր կը լինի սրբելու աղէտից ճնշվածների արտասունքը, բայց հայ ժողովրդի տուած նպաստը մի հատ չը կայ հայերէն նրանց ձեռքին, թէ և մեծամասնութիւնը ռուսերէն չը գիտէ։

Մ. Ղազարեան

ՆԱՄԱԿ ԿԱՂՁՎԱՆԻՑ

—

Օգոստոսի 22-ին

Ամսիս 18-ին տեղիս հասարակութիւնը և գիւղերից կանչվածները ներկայացան դատարան՝ կազմվելիք ինքնավարութեան խորհրդակցութիւնների համար լինելի ընտրութիւնների հետ ծանօթանալու, որից անմիջապէս յետոյ I և II կարգի վաճառականներին առաջարկվեց ընտրել իրանց միջից չորս հոգի։ Այդ դասակարգի ընդհանուր հրաւիրվածների թիւն էր 69 հոգի (66-ը վաճառական, 3-ը հողատէր) ներկայացել էին 40 հոգի։ Հետևաբար այդ 40 հոգին իրանց միջից պէտք է ընտրէին 4 ներկայացուցիչ, իսկ մնացած կարգերի դասակարգը, որը ունի 8—900 ձայն, պէտք է ընտրէ միայն երկու հոգի։ Ուստի բողոք եղաւ այդ մասին, բայց, հրահանգը բարձրից լինելով, բողոքը չընդունվեց։ Ցաւենայն դէպս, ցանկալի էր, որ ընտրված ներկայացուցիչները այդ կէտը փոխելու ջանք անեն։ Ցիշեալ կարգի վաճառականները այնքան էլ ջերմ, գործի մեծութեան արժանի կերպով չը մօտեցան գործին. այնպէս որ առանձին ոչ մի ջանք գործ չը դրվեց նրանց կողմից։ Մինչև անգամ առաջարկվեց մի քանի ժամով ժողովը յետաձգել լաւ թեկնածուներ ճարելու մասին խորհրդակցելու համար, այդ էլ աւելորդ համարեցին, և մէկը միւսի վրա գցելով՝ մի կերպ չորս հոգու համաձայնեցրին։

Իսկ միւս դասակարգի ընտրութիւնը յետաձգվեց ամսիս 21-ին, կիրակի օրը, երբ ամեն մարդ ազատ կը լինի և հնարաւորութիւն կունենայ ժողովին մասնակցելու։ Այդ երկու օրվայ միջոցում երիտասարդները միջոցներ ձեռք առան ժողովրդին գործի հետ ծանօթացնելու և լաւ թեկնածուներ աչքի առաջ ունենալու։ Եւ 21-ին 203 հոգուց բաղկացած ժողով գաղտնի քուէարկութեամբ չորս թեկնածուներից երկուսին ընտրեց ներկայացուցիչ։

Վաղը—ամսիս 23-ին, տեղս գալու են նաև գիւղերի 10 ներկայացուցիչները, խորհրդակցական ժողովներն սկսելու, բայց դժբաղդաբար ինքնավարութեան կանոնագրքերից ոչ մի հատ չը կայ հայերէն նրանց ձեռքին, թէ և մեծամասնութիւնը ռուսերէն չը գիտէ։

Մ. Ղազարեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Մշակի» ներկայ համարը բաղկացած է $1^1/_2$ թերթից։

—

Ամենայն Հայոց կաթողիկոսի հրամանով երէկ երեկոյեան Թիֆլիսից Հաջի-Քաբուլ մեկնեցին Նահապետ եպիսկոպոսը և Զաւէն վարդապետը դիմաւորելու պարսից Շահին և ողջունելու նրան Վեհափառի անունից։

—

Տեղական լրագիրները հաղորդում են, որ Փոխարքայի օգնական գեներալ մայոր Շերբինկինը մտել է հեռագրական յարաբերութեան մէջ Գանձակի, Երևանի և Բագուի նահանգական վարչութիւնների հետ այդ տեղերում կատարված անկարգութիւնների մասին ամենամանրամասն և փաստական ապացոյցներ յայտնելու։ Բացի դրանից հաղորդել անկարգութիւնների պատճառները նոյնպէս մեռածների ու վիրաւորների թւի մասին։

—

Երէկ, օգոստոսի 27-ին, Թիֆլիսի նահանգի պետական դպրոցների տեսուչ Գ. Շուլգինը այցելել է Թիֆլիսի թեմի առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոսին և բանակցել հայոց դպրոցներին պատկանող բոլոր շէնքերի վերադարձման առիթով բանակցելու։ Վճիռ է կայացել, որ մի քանի օր ոչ պետական տարրական դպրոցներում (նախկին հայ դպրոցները), ոչ էլ վերաբացվող հայ դպրոցներում նոր աշակերտների ընդունելութիւն չանեն, մինչև որ այս 2-3 օրում վերջնական համաձայնութիւն կայանայ շէնքերի վերադարձման մասին։

—

Անդրկովկասի երկաթուղիների վարչութիւնը հեռագրով կարգադրել է իր իրաւասութեան տակ եղած բոլոր կայարաններին այլ ևս Բագու ուղարկելու համար չընդունել ապրանքներ։ Նոյն կարգադրութիւնը հաղորդված է երկաթուղային միւս կայարաններին էլ։

—

Հրդեհի վայրն անցայ։ Այրվում են Թամիրեանցի, Աբբրումեանցի տները իրանց շրջակայքով։ Եթէ շարունակվի՝ հրդեհի լափը կանցնէ Թոփխանա։ Խանութները դատարկվում են, բայց ոմն է իր ապրանքի տերը։ Մուխը խեղդում է մարդու։

—

Երեկ. 3 ժամ.

Հրդեհի հրեղէն լեզուները մարդուս կատաղեալ գժութեան են հասցնում։ Բազուի աղէտը որա մօտ սուտուր է. գոնէ այսպէս են ասում ականատեսները։ Կանայք ու երեխաներ գժուածի պէս մի մի իր ձեռներին՝ այս ու այն կողմն են վազվզում. ուր—իրանք էլ չը գիտեն։ Բանիսները մատն մեր բակը. չը դադարեցին, չը հանգստացան և դուրս գնացին. խնդրում էինք մնալ մեզ մօտ.—չէ, այստեղ էլ ապահով չէ, վո՛ւյ, քեզ մատաղ, ազգոցը անցնում է գլխովս։ Եւ փախչում են...

—

Երեկ. 3 ժ. 20 ր.

Հիւսէին-աղա Ջիվանշիր իր մարդկանցով, որ պատանդ էր պահված հայերի մօտ, հայ քաջերով առաջնորդարան տարվեց։ Միւս բռնված Թուրքերը ևս տարան նրա ետևից։ Բերվեցան և Թուրքերի մօտ բռնված հայերը։ Նահանգապետը, գաւառապետը, առաջնորդը և պատանդ հայերն ու Թուրքերը ժողովրդի ներկայացուցչութեան հետ գնացին Ռիզա-Կուլի-Միրզայի տունը հաշտութիւն կնքելու։ Այնտեղ պիտի գան զաղին և Թուրք մեծերը, բայց ժամը 5 է և դեռ զաղի չը կայ։ Հրացանաձգութիւնը շարունակվում է և հրդեհը բարձրանում։ Լուր հասաւ, որ Աղդամից 300 ձիաւոր Թուրքեր են եկել։

—

Երեկ. 7 ժ.

Երեք ժամ է սպասում ենք. հաշտութեան կաբինետից հազիւ վճիռ արձակվեց—հաշտութիւն... բայց չէ դադարում հրացանաձգութիւնը։ Հրդեհը հասել է Մէթայէլ-խանի տները և այրվում է։ Շուշին ձեռից գնաց. հայերը միլիոնների վնաս կրեցին։ Արշակ Մելքումեանցի խանութից սկսած, Անանեանցի տան ուղղութեամբ, թեք կերպով կտրած մինչև Խանիաղկայ աղբիւրը, և Բաքա Հախումեանցի տանից մինչև հին հանգստարանի արևելեան ճակատը և Ս. Աղամալեանցի (մէյդանի ներքին ճակատի) տանից մինչև Թուրքերի Թաղը բոլորը այրվում է։

—

Դիշերվայ 12 ժամին

Անցայ հրդեհի վայրը։ Օգնող չը կայ։ Տների արանքները չեն քանդում, որ հրդեհի առաջն առնեն։ Տեսայ իր այրվող տան դիմաց կանգնել է փաստաբան Ալէքսան-բէգը և ելեխայի պէս հեկեկում է։ Իշայ Բօրժօմ հիւրանոցի առաջ—մարդ չը կայ. Թուրքերի գընդակները տղղալով անցնում են և դեռ չեն դադարել։ Հրդեհը ցածանում է ներքև, դէպի Թուրքերի Թաղը, բայց նրանք առաջը կարել են, կօզակներ անցան, երևի Թուրքերին զսպելու. հարցրի, ոչինչ չը պատասխանեցին։ Վերադարձայ ժամի 1-ին։ Կրակի ծովացած լաւան, ինչպէս վաղորդեան արեգակ, լուսաւորել է ամբողջ քաղաքը։ Մեր տանը ապաստանվածները թափթփված են երկաթուղու կայարանում գնացքին սպասող ճանապարհորդների նման, միայն այն զանազանութեամբ, որ սրանց ձեռներին կապոցներ չը կան և հրդեհից փախել են, ամեն մէկն իր երեխաներին հազիւ փրկելով։ Իսկ մեր տանեցիք մի մի կապոց բռնած սպասում են հրդեհի մօտենալուն, որ փախչեն. ուր—չեմ հասկանում. բարկացայ ու հանգստացրի։ Դիշերը չենք քնում. աղամարդիկ Թուլացած ընկած են արբածի նման, երեխաները կիսաքուն, իսկ կանայք խենթի պէս զրոյցներ են ասում։ Ժամը 4-ն է, մի կողմից անողորմ հրդեհն է, միւս կողմից անգութ խուժանի հրացանների ճռռոցը։—Հաշտութիւնը անուանական է...։

—

Օգոստ. 19, առաւ. 7 ժ.

Դուրս եկայ տանից, անցայ Թոփխանան. հայի բազարի 3/4 այրված է մէյդանից ցած։ Կրակը նստած է. տների պատերը մնացել են ցից-ցից, իսկ շատերը Թափվում են։ Փողոցի միջով անցնելիս տաքանում է ոտների տակը, իսկ հրդեհի հովը Թոնրի պէս այրում է երեսս։ Մարդ չը կայ. աւեր ու աւերակ է։ Այրված կտրված են հեռագրի փայտերն ու լարերը։ Քար սրտի տէր մարդն անգամ տեսնելով այս աւերածութիւնները՝ էլի մի զոյգ կաթիլ արտասունք կը գլորէ աչքերից։

Հարկաւոր է օգնութիւն. խօսքը շատ անզօր կը լինի սրբելու աղէտից ճնշվածների արտասունքը, բայց հայ ժողովրդի տուած նպաստը մի հատ չը կայ հայերէն նրանց ձեռքին, թէ և մեծամասնութիւնը ռուսերէն չը գիտէ։

Մ. Ղազարեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Մշակի» ներկայ համարը բաղկացած է $1^1/_2$ թերթից։

—

Ամենայն Հայոց կաթողիկոսի հրամանով երէկ երեկոյեան Թիֆլիսից Հաջի-Քաբուլ մեկնեցին Նահապետ եպիսկոպոսը և Զաւէն վարդապետը դիմաւորելու պարսից Շահին և ողջունելու նրան Վեհափառի անունից։

—

Տեղական լրագիրները հաղորդում են, որ Փոխարքայի օգնական գեներալ մայոր Շերբինկինը մտել է հեռագրական յարաբերութեան մէջ Գանձակի, Երևանի և Բագուի նահանգական վարչութիւնների հետ այդ տեղերում կատարված անկարգութիւնների մասին ամենամանրամասն և փաստական ապացոյցներ յայտնելու։ Բացի դրանից հաղորդել անկարգութիւնների պատճառները նոյնպէս մեռածների ու վիրաւորների թւի մասին։

—

Երէկ, օգոստոսի 27-ին, Թիֆլիսի նահանգի պետական դպրոցների տեսուչ Գ. Շուլգինը այցելել է Թիֆլիսի թեմի առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոսին և բանակցել հայոց դպրոցներին պատկանող բոլոր շէնքերի վերադարձման առիթով բանակցելու։ Վճիռ է կայացել, որ մի քանի օր ոչ պետական տարրական դպրոցներում (նախկին հայ դպրոցները), ոչ էլ վերաբացվող հայ դպրոցներում նոր աշակերտների ընդունելութիւն չանեն, մինչև որ այս 2-3 օրում վերջնական համաձայնութիւն կայանայ շէնքերի վերադարձման մասին։

—

Անդրկովկասի երկաթուղիների վարչութիւնը հեռագրով կարգադրել է իր իրաւասութեան տակ եղած բոլոր կայարաններին այլ ևս Բագու ուղարկելու համար չընդունել ապրանքներ։ Նոյն կարգադրութիւնը հաղորդված է երկաթուղային միւս կայարաններին էլ։

—

աւելի կատարելագործված և Թուրքերի յարձակումը—թալանում են այդ Թաղը, բայց չեն այրում։

Կարծեմ գրեցի, որ յայտարարված է պատերազմական դրութիւն։

—

Օգոստոսի 20-ին, առաւ. 7 ժ.

Աղաբէգէնց ձորում սարսափելի հրացանաձգութիւն է։ Դարձեալ Թուրքերը չեն դադարում։ Բազար չը կայ, բայց փառք Աստուծոյ. որ հաց Թխում են և շատ չէ Թանգացել—ֆունտը 5—6 կօպէկ։ Գործ ենք ածում հովուղների անձրևաջուր։

—

Առաւ. 10 ժ.

Հայերը խաչով-խաչվառով, զօրքը ժուղիկայով դուրս գնացին։ Թուրքերը խաչվառին գնդակ արձակեցին։ Թափօրը յետ փախաւ։ Նրանք երդվել են կատաղի կերպով կռուել, յայտարարելով կրօնական, համիսլամական պատերազմ, մտել են Ագուլեցոց եկեղեցին և Ղուրանը դրել սեղանի վրա...։ Վառօդի հոտը խեղդում է մարդուն։ Գնդակները կարկուտի պէս Թափվում են և նրանց բազմատեսակ ձայները—վզզոց, տզզոց, ճվոց, ծկլթոց, դըմփոց և այլն չեն Թողնում իրար ձայն լսել։ Նահանգապետը Թուրքերի Թաղից գրեց գաւառապետին, որ ինքը ձեռնթափ է մնում այլ ևս պաշտպանելու քաղաքը, և Թող հայերը ինչ միջոց ուզում են գործ դնեն իրանց պաշտպանութեան համար։ Օրհասը քաջալերեց հայերին—կամ մահ կամ ազատութիւն. և բոլոր դիրքերից ուժգին Թափով յատաս յարձակում գործեցին. Թուրքերը սկսեցին նահանջել...։

—

Երեկ. 4 ժ.

Բազունց հորերից հայերի յարձակումն աւելի կատաղի է. Թուրքերը փախան Թողնելով իրանց ետևից բաւական դիակներ։ Հայերը վազեցին նրանց ետևից և... գործեց ռումբը։ Ահռելի գոռումը սարսափահար արեց Թուրքերին և նրանք խնդրեցին հաշտութիւն, բարձրացնելով սպիտակ դրօշակ։ Ժամը 1-ից մինչև 3-ը առաջնորդ, զաղի, Թուրք և հայ առաջաւորներ ման եկան հայի և Թուրքի Թաղերով, աւետարանը և դուրանը բռնած, սպիտակ դրօշակը հեռներին, մուղիկան նուագելիս։ Գոնէ սա վերջինը լինի...։ Դարձեալ

Բագուի տեխնիկական մասնաճիւղ դպրոցի տեսուչը օգ. 25-ին հեռագրել է Կովկասի դպրոցական շրջանի հոգաբարձուին. «Սովամահ ենք լինում։ Մեծ դժուարութեամբ ձեռք ենք բերում հաց ու ջուր։ Դպրոցում ապաստան են գտել բազմաթիւ կողմնակի անձեր։ Աղաչում ենք ձեզ ուղարկել գլխով և ուրիշ տեսակ պանիր, կալբաս և այլ տեսակ ուշ փչացող ուտելիքներ։ Խորին շնորհակալութեամբ կը վերադարձնենք բոլոր ծախքերը։ Դրութիւնն անել է»։

—

Կովկասի գլխաւոր վարչութեան հրամանով, գէներալ լէյտենանտ Ա. Ս. Զելենոյը երէկ Երեկոյեան մեկնեց Բալաջարի, բարի գալուստ մաղթելու պարսից Շահին։

—

Մեզ հաղորդում են, որ Ղազախի գաւառի Աղաջար գիւղում օգոստոսի 24-ին տեղի է ունեցել շրջակայ հայ և թուրք գիւղերի ներկայացուցիչների ժողով խորհելու ներկայ վիճակի մասին։ Ներկայացուցիչներ եղել են 14 գիւղից։ Հայեր և թուրքեր Աւետարանի և Ղուրանի առաջ խօսք են տուել միմեանց՝ հաւատարիմ մնալու իրանց վաղեմի հաշտ կեանքին։ Ժողովին ներկայ են եղել գիւղական վարչութեան անձինք և տեղական կալուածատէրերը։ Ժողովին մասնակցել են հայ Աղաջար, Ուղունթալա, Սեքար, Սերիգիւղ, Կունէն, Զողաղ, Մէլիք գիւղ և թուրք Սօֆլու, Խանուխլար գիւղերի ներկայացուցիչներ։

—

«Ցնօբիս-Փուրցէլի» լրագիրը հաղորդում է, որ հարուստ թուրք Թաղիեվ անցեալ օրը հեռագիր է ուղարկել Կովկասի Փոխարքային, յայտնելով թէ իր մանուֆակտուրայի գործարանը, ուր երկու հազար ռուս և թուրք մշակներ են աշխատում, քարուքանդ անել են պատրաստվում։ Բիբի-Էյբաթից դուրս է եկել մի նաւ, որի մէջ նստած են եղել հինգ հազար զինաւորված հայեր։ Դրանք, ասում է, սպառնում են քանդել նրա գործարանը և խնդրում է օգնութիւն։

—

Ստացանք հետեւեալ նոր գրքերը. 1) Г. М. Тумановъ «Характеристики и Воспоминанія» книга II., տպված Թիֆլիսում, 202 փոքրադիր երես, գինը 50 կ.։ 2) Մարդար «Հալածանքի Ծնունդ», քերթուած, (Բաբիի երգերից), տպված Ալէքսանդրօպոլում, 64 մէջկ երես, գինը 20 կոպէկ։

—

ՎԱՂԱՐՇԱՊՍՏԻ 8 մեզ գրում են. «Վաղարշապատից 7—8 վերստ հեռաւորութեան վրա դէպի հարաւ-արևելք գտնվում է մի հայ գիւղ Ներքին—Խաթունարխ անունով։ Վերոյիշեալ գիւղի բնակիչները զաղթել են ռուս-պարսկական պատերազմների միջոցին դէպի Երեւանի նահանգի կողմերը և ներկայումս բնակութիւն են հաստատել յիշեալ տեղում,—էջմիածնի գաւառում։ Սկզբում թւով քիչ լինելով, նրանք մի ժամանակ բաւականացել են իրանց տրված հողերով և վարել են բաւարար կենցաղավարութիւն։ Ներկայումս 70—75 տարի անցնելուց յետոյ, երբ բնակիչների թիւը շատացել է 18—19 անգամ, գիւղացիների դրութեան մէջ ամեն ինչ փոխվել է։ Գիւղացիների բազմանալու հետ միասին առաջացել է հողաքաղութիւն այն աստիճան, ինչ աստիճան որ գիւղացիք բազմացել են միայն հակառակ յարաբերութեամբ։ Այս աչքի ընկնող երևոյթը գիւղացիներին չափազանց դառն վիճակի է հասցրել, հաւաբեա թէ հասցնելով նրանց մուրացկանութեան։ Ի նկատի առնելով իրանց հողերի անբաւարարութիւնը, 1905 թւի օգոստոսի 9-ին Ներքին-Խաթունարխի գիւղի բնակիչները ներկայացրել են մի խնդիր Կովկասի Փոխարքային, որով նրանք աղերսում են նախ կրկին վերադարձնել իրանց զանազան ժամանակներում հարևան գիւղացիների կողմից անօրէն կերպով իրանցից խլված հողերը և երկրորդ՝ դնել իրանց տրամադրութեան տակ արքունական ազատ հողերից, որոնք գտնվում են Կովկասում»։

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻ 8 (Գօրու գաւառ) մեզ գրում են. «Մարտից սկսած մինչև օգոստոսի 1-ի Բարձրագոյն հրովարտակի հրատարակման շնորհիւ Վրաստանում հողային հարցի առիթով եղած գիւղական շարժումների, տեղական հայ ազգաբնակութեան երեսին ժպիտ չէիք տեսնի։ Ահա օգոստոսի 1-ի Բարձրագոյն հրամանը ցրեց այդ մառայը և անհուն ուրախութիւն պատճառեց բոլորին, որի առիթով կիրակի, ամսիս 7-ին, պատարագից յետոյ, խուռն բազմութեան ներկայութեամբ կատարվեցին Կայսերական և Հայրապետական մաղթանքներ։ Պատարագին պարտ ու պատշաճ քարոզ խօսեց մեր կողմի գործակալ Ց. քահ. Մելիմանեանը, հրաւիրելով հասարակութեան միահամուռ ոյժերով գործելու լուսաւորութեան և եկեղեցական գործերում։ Մաղթանքից յետոյ շնորհակալութեան հեռագիր ուղարկվեց Կիսլովոդսկ Կովկասեան Փոխարքային, արևշատութիւն մաղթելով Նորին Կայսերական Մեծութեան և Օգոստափառ Ընտանիքին և իրան Կոմսին ու Կոմսուհուն։ Երկու օր անց ստացվեց Փոխարքայից սրտանց շնորհակալութիւնը հեռագրով»։

—

ԱՍՏՐԱԽԱՆԻ 8 մեզ գրում են. «Աստրախանի հասարակական կեանքը այնքան մառայլ է, որ ամենաչնչին կուլտուրական գործը, քայլը, որը մի փոքրիկ շարժում, կենդանութիւն կարող է առաջացնել, արձանագրութեան արժանի է։ Տողերիս գրելուն առիթ է տալիս այս օրերս Աստրախանում բացված հանրամատչելի գրադարան-ընթերցարանը։ Աստրախանի պէս 120 հազարից աւելի բնակիչ ունեցող քաղաքը իր կենտրոնում ունի միայն մի հասարակական հարուստ գրադարան-ընթերցարան, որը, ի հարկէ, դժուար է բաւարարութիւն պատճառում և ինտելիգենտին և բանուորին, և գործակատարին, և հային, և ռուսին, և հրէային և այլն։ Ահա այդ նոր բացված գրադարան-ընթերցարանը գալիս է մասամբ թեթևացնելու այդ մի գրադարանի դժուար լուծը և իրան դիւրութիւններով մատչելի լինելու աւելի ժողովրդի ստորին մասին։ Նախ նա բացված է քաղաքի կենտրոնից բաւական հեռու, հայոց թաղում և երկրորդ գները մատչելի են դարձրած, միացրէք դրա հետ նաև որոշ ուղղութիւնով ստացվելիք հաւաբեա բոլոր առաջադէմ թէ ռուս և թէ հայ պարբերական հրատարակութիւնները։ Ընթերցարանի երևան գալը կարևոր է մեզ մօտ մանաւանդ այժմ, երբ քաղաքում ընդունած խանութների փակման կանոնաւորման (нормировка) հիման վրա, գործակատարները երեկոյեան ժամը 8-ից բոլորովին արձակվում են։ Որովհետև գրադարան-ընթերցարանը բացված է օր. Բախրեանի անունով, ուստի գովում ենք նրա մատածած այդ գեղեցիկ քայլը»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐՔԻԱՆ ԵՒ ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՆ

—

«Թիւրքական ցենզուրան արգելեց լրագիրներին յօդուածներ գրել Պետական Դումայի մասին. թոյլ չը տուեց նոյն իսկ այդ մասին հեռագիրները զետեղել։ Սակայն լուրը արագ տարածվեց քաղաքում և երիտասարդ թուրքերը նախանձվում են ռուսներին, որոնք աւելի ազատ են այժմ քան իրանք»։

Հեռագրական գործակալութեան կ. Պոլսից հաղորդած այս լուրը, Ռացեալ լուրերի նման՝ ընթերցողները կարդացին գուցէ ու անցան։ Բայց արժէ նրա վրա մի բոպէ կանգառնել։

Եւրոպական մամուլը, խորհողները՝ յաճախ մատնանիշ են արել Թիւրքիային իբրև Եւրոպայի կրծքին կպած վէրք, իբրև վրդովեցուցիչ անախրօնիզմ։

Եւ այդ վէրքը, փոխանակ սպիանալու, էլ աւելի խորանում, էլ աւելի խեղդող է դառնում։

Նա ոչ միայն ոտնակոխ է անում, անարգում մարդկային առաջադիմութեան սրբազան օրէնքը, այլ անսանձ կամայականութեան խելագար մարմնացում՝ հետզհետէ աւելի ճնշում, ասնջում է մարդկային խղճմտանքը, վիրաւորում, մարդ էակի արժանապատուութիւնը։ Որովհետև Սուլթան Համիդը ոչ միայն չէ խորհում իր ռէժիմի մէջ մի քիչ մարդկայնութիւն, մի քիչ արդարութիւն մտցնել, այլ դատապարտում, հալածում է այդ ռէժիմի փոփոխութեան հեռաւոր հաւանականութիւնն անգամ. նա մինչև իսկ արգելում է կ. Պոլսի գիւղերի մօտով անցնելու ժամանակ։

Վարանդ գաւառամասի ստորին շղթայի հայ գիւղերի՝ Նախիջևանի, Փիրջամալ, Վարագաբոյն, Ղզլդալա, Սպիտակշէն ահա երրորդ օրն է ամեն գիշեր յարձակման են ենթարկվում Ներքին տափարակի վրա գտնվող Շէլլու, Շիխբաբալու, Սայբալու և այլ թուրք գիւղացիներից, բայց յետ են ժղվում հայերից։ Եթէ շուտով զօրքը օգնութեան չը գնայ՝ կարող է ընդհարումը աւելի լայն ծաւալ և ստանալ։

Երեկոյեան եկաւ Շէյխ-ուլ-Իսլամը։

—

Օգոստոսի 23-ին

Այսօր սպասվում էր Շէյխ-ուլ-Իսլամը առաջնորդարանում։ Ժողովուրդը խռնվել էր այնտեղ, բայց լուր եկաւ, որ նա տկար է և չի կարող գալ։ Առաջնորդը, նահանգապետը, գաւառապետը և մի քանի հայեր գնացին Շէյխին տեսութեան։ Նա ցաւակցութիւն յայտնեց կոտորածի համար, ասելով որ Բագու, Երևան, Նախիջևան ինքը պարծանքով է յիշել Շուշու հայերի և թուրքերի համերաշխութեան մասին, բայց ընդհակառակը պատահեց։

Տող գիւղից հայեր եկան և յայտնեցին որ Ղաջարի թուրքերը միացած ուրիշ թուրքերի հետ, ուզում են յարձակում գործել հայերի վրա։ Շէյխ-ուլ-Իսլամը հեռագրեց Ղարաբուլաղ ազդեցիկ թուրքերին՝ զսպելու թուրքերի յարձակումը։

Շուշուց վերադարձող թուրքերը Ակեռաանում՝ եկող զօրքի հետ ընդհարում են ունեցել, հրաձգութեան բռնվել։ սպանվել են 7 թուրք, բռնվել 20 և խլել են 40 հրացան։

Աղդամում թուրքերն այրել են Խուբլարեանների, Ահարոնեանի, Սողոմոնեանի և ուրիշների սպիրտի գործարաններն ու տները և կոտորել միջի հայերին—թիւրք յայտնի չէ։ Ղայբալու գիւղում, որտեղ է Ներսէսեանցի մետաքսէ գործարանը՝ հրդեհ է ձգած։ Այրվել են առհասարակ թուրք գիւղերի մօտ գտնվող հայերի բոլոր գործարաններնու տները։

Հայերը յանձնաժողով կազմեցին աղէտից ֆաստվածների համար հանգանակութիւն անելու։

—

Օգոստ. 24.

Այսօր առաւօտ մտաւ զօրքը—580 մարդ։ Սպասվում է գէներալ նահանգապետը, բայց մինչև հիմա չը կայ։

Տ.

դերիների փոխանակութիւն։ Թուրքի բաղարում եղած հայերի խանութները կողոպտված չեն։

Ասում են, որ կոտորածն անցել է գաւառը։ Իսկ թուրքերը կողոպտել են Ամարասը և տարել Գրիգորիսի մասունքները,

—

Երեկ. 9 ժ.

Դարձեալ տրաքոց։ Հինգ ժամվայ հանգըստութիւնը խանգարվեց։ Մի բոպէում ճռռոցը ընկաւ։ Ի՞նչ է այս։ Հարայ են տալիս չարձակել։ Դադարում է։ Ստուգում են, որ քերծի տակից գառալուեցի թուրքերն են բարձրացել և հայերը փախցրել են...։

—

Օգոստոսի 21-ին։

Նախքան մտածելը թէ ինչով պիտի ապրեն մեր հրդեհից ազատված շուշեցի մերկ ու թշուառ հազարաւոր եղբայրներն ու քոյրերը, հարկաւոր է ամենից առաջ, որ ազատ մնացած տներն անգութ չը գտնվեն իրանց յարկի տակ հիւրընկալելու և կերակրելու նրանց և զօրանոցից ու դպրոցական շէնքերից հանեն, բաժանեն իրանց մէջ։ Ապա հարկաւոր է նրանց կերակրելու, հագցնելու, հարիւրաւոր այրված, սպանված ու վիրաւորված ազատ մարդկանց՝ ծնողների ու հարազատների արտասունքը սրբելու համար, որ մեր միլիոնատէրերը բաց անեն իրանց քսակը, ձեռքերը տանեն առանց մտածելու թէ՝ 100 ռուբլի տամ բաւական է, 5 տամ հերիք է, բուռերով հանեն ոսկիները և ուղարկեն դժբաղդ շուշեցիներին, եթէ նրանք ուզում են, որ Շուշին խապտ չը փչանայ, սովամահ չը լինի։ Ցետոյ անշուշտ հարկաւոր է, որ շուշեցիներն իրանց համերաշխութեան յանձնաժողովները շտապեն օգնութեան յանձնաժողովի վերածել, բաւարարական հաստարելով ինչքան համերաշխութիւն պահպանեցին, ձեռնարկեն անյապաղ հանգանակութեան։ Հարկաւոր է ամենալուրջ, խելացի միջոցներ, ամենախիստ պայմաններ, որ այս կրակն ու պատուհասը նորից չը բռնկէ և հիմնայատակ կործանէ ժողովրդին։ Շատ բան է հարկաւոր, բայց... վերջապէս եթէ ուզում էք որ Շուշին կանգուն մնայ, չը գաղթէ, այրված չէնքերը, գոնէ բաղարը, շինվեն՝ անպատճառ հարկաւոր է դրամական օգնութիւն, ուզում էք հասկացէք միլիոններ։ Այրված, մոխիր կորած տանտէրերի և ազատքատէրերի մեծ մասն իր ընտանիքը կերակրում էր նրանց եկամուտով։ Չեմ կարծում թէ նրանցից մէկը գտնվի, որ կարողանայ վերաշինել իր տունը. դրանց շատերի էլ եղած չեղած հարստութիւնը այրվել է իրանց տնեսում։

Անցեալ անգամ գրեցի, որ այրված են 200-ի չափ տներ և 500-ի չափ խանութներ, այժմ հաշուում են այրված տները 300-ից աւելի. իսկ թուրքերից հազիւ 20 տուն, այն էլ շատ անարժէք մերիններին մօտ։ Ղազանչեցոց և ագուլեցոց եկեղեցիները, որոնց չորս կողմն այժմ աւերակ է, ազատվել են շնորհիւ նրան, որ չեն կպած շէնքերի և զուտ քարեր են, միայն պատերը մուխից և բոցերից սևացել, խանձոտվել են։ Այրվել են քաղաքային վարչութիւնը, դատարանը, Մարիանեան ուսումնարանը իրանց գործերով։

Հինգ օրվայ պատերազմը երկու հարևան ազգերին տուել է հայերից մօտ 100 զոհ, որից 40-ի չափ վիրաւոր, իսկ թուրքերից, ինչպէս ասաց գաւառապետը, մինչև 600։ Մի թուրք ինձ ասաց, որ իրանց զոհերի թիւը 25 հազիւ լինի և վիրաւորներինը 50։ Բայց հրդեհը տուել է հայերին մօտաւորապէս 5 միլիոն վնաս, իսկ թուրքերին հազիւ 30 հազար։

Դիակները հաւաքում են։ Մոխրակոյտերի տակից այրված, խորովված զոհերի փշրանքներ են հանում...։ Հայ վիրաւորները բոլորը քաղաքային հիւանդանոցումն են, իսկ թուրք վիրաւոր չը կայ այդտեղ ոչ մի հատ։ Վիրաւորներին խնամում են նոր դթութեան քոյրեր։

Ես նկարագրում եմ Շուշու կոտորածն ու աւերածը նոյնութեամբ, ինչպէս տեսել ու լսել եմ, առանց զգացմունքների, վշտերի և դառնութիւնների արտայայտութեան, առանց մեղադրելու, թէ ով էր յանցաւոր, որ սկսվեց այս կոտորածը, և ինչու թուրքը նախայարձակ եղաւ։ Ես այլ ևս աւերածների բեկորները չեմ գնում. սիրտս չի դիմանում թէ նրանց տեսնելիս և թէ խեղճ տէրերի արտասուող դէմքերին ու խաչաձև ձեռներին նայելիս։ Փողոցներն ու տները դժուար են ջոկվում, անց ու դարձի տեղ չը կայ։ Թող Վրոյրներն ու Թորամանեանները մի բոպէ դադար առնեն, թող մեր շնորհալի լուսանկարները շտապեն Շուշի և լուսանկարեն Սիւնեաց քաջերի որդոց բնակարանների աւերակները և ի ցոյց հետաքրքրվող հայրենակիցներին։ Դա կը լինի աւելի կենդանի նկարագիր, քան գրողի նկարագրութիւնները, գրողի, որի սիրտը վշտերի ծով է և հինգ անքուն գիշերներից տանջված, թմրած ու անընդունակ դարձած է բանաստեղծական նկարագրութիւններ անելու։ Գործը շատ է. Թոփխանից մինչև Թուրքերի սահմանը բոլորը աւերակներ են և դրանց տեսարանները նկարելու ահագին ժամանակ կը լինի։

Վեց օր է պօստ չենք ստանում և աշխարհից տեղեկութիւն չունենք։

—

Օգոստոսի 22-ին

Ծանր օդ է։ Այրված տների և դեռ թափթփված դիակների հոտն ընկել է քաղաքը։ Աւերակների միջով անցնել չէ լինում։ Կարող է խոլերա պատահել, եթէ դիակները շուտ չը հաւաքեն։ Այսօրվանից սկսել են թաղել հաւաքած դիակները։

Ագուլեցոց եկեղեցին թուրքերն իրանց համար կուռ դիրք էին շինել։ Զանգակատանից էր նրանց հրացանաձգութիւնը։ Եկեղեցու դուռը կոտրելով գնդակների հարուածներով մտել են ներս, Աւետարանը վերցրել սեղանից շպրտել և տեղը դրել դուրանը։ Եկեղեցու ներսը թափված են խաղաթղթեր և ծխած պապիրոսներ. ջահերը կոտրատել թափել են յատակի վրա. յատակը ճղճղոտել են, մէջ տեղ, փայտեայ կաթուղիկէի տակ, կիտել տախտակների կտորտանք, փալասներ, խոտ, հասիլ, թուրքի կնկայ շորեր և նաւթ թափել վրան, որ դուրս փախչելուց վառուն, բայց չեն հասել նպատակին... ռումբը պայթելուց երեք չորս հոգի փրթվել են և տեղ տեղ աբեան լճակներ կազմել։ Եկեղեցին պղծված է, պատերի վրա բոլորը գնդակների տեղեր են։

Քաղաքը պապակվում է ջրի երեսից. դեռ չեն կապել ջուրը։ Խանութը չէ բացվում, մարդերը չը կայ, միս չը կայ, ուտելու բան չը կայ. լաւ է որ ցամաք հացը ճարվում է։ Անձրևաջուրն ու հորերի աղաջուրը մարդու սիրտ դաղում այրում են. դա էլ որ հատաւ՝ անտանելի կը լինի ժողովրդի դրութիւնը։ Հաշտութեան երրորդ օրն է, դեռ սկզբնական ոչ մի օգնութիւն թշուառներին։ Հայերի խանութներից ու տներից հայերի ձեռքով թալանված ապրանքները տներից դուրս են հանվում... Թուրքը կողոպտել է հայի տունը, հայն էլ կողոպտում է խանութը։ Ամօթ այդ տեսակ հայերին։

Քաղաքից հարիւրաւոր ձիաւորներով խումբ խումբ տանում են զինված թուրքեր, որոնք եկել են կուռ ժամանակ այստեղի թուրքերին օգնելու։ Ինչէ՞ր չը պիտի անեն նրանք հայ թիւնները։ Ընթերցարանի երևան գալը կարևոր է մեզ մօտ մանաւանդ այժմ, երբ քաղաքում ընդունած խանութների փակման կանոնաւորման (нормировка) հիման վրա, գործակատարները երեկոյեան ժամը 8-ից բոլորովին արձակվում են։ Որովհետև գրադարան-ընթերցարանը բացված է օր. Բախրեանի անունով, ուստի գովում ենք նրա մատածած այդ գեղեցիկ քայլը»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐՔԻԱՆ ԵՒ ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՆ

—

«Թիւրքական ցենզուրան արգելեց լրագիրներին յօդուածներ գրել Պետական Դումայի մասին. թոյլ չը տուեց նոյն իսկ այդ մասին հեռագիրները զետեղել։ Սակայն լուրը արագ տարածվեց քաղաքում և երիտասարդ թուրքերը նախանձվում են ռուսներին, որոնք աւելի ազատ են այժմ քան իրանք»։

Հեռագրական գործակալութեան կ. Պոլսից հաղորդած այս լուրը, Ռացեալ լուրերի նման՝ ընթերցողները կարդացին գուցէ ու անցան։ Բայց արժէ նրա վրա մի բոպէ կանգառնել։

Եւրոպական մամուլը, խորհողները՝ յաճախ մատնանիշ են արել Թիւրքիային իբրև Եւրոպայի կրծքին կպած վէրք, իբրև վրդովեցուցիչ անախրօնիզմ։

Եւ այդ վէրքը, փոխանակ սպիանալու, էլ աւելի խորանում, էլ աւելի խեղդող է դառնում։

Նա ոչ միայն ոտնակոխ է անում, անարգում մարդկային առաջադիմութեան սրբազան օրէնքը, այլ անսանձ կամայականութեան խելագար մարմնացում՝ հետզհետէ աւելի ճնշում, ասնջում է մարդկային խղճմտանքը, վիրաւորում, մարդ էակի արժանապատուութիւնը։ Որովհետև Սուլթան Համիդը ոչ միայն չէ խորհում իր ռէժիմի մէջ մի քիչ մարդկայնութիւն, մի քիչ արդարութիւն մտցնել, այլ դատապարտում, հալածում է այդ ռէժիմի փոփոխութեան հեռաւոր հաւանականութիւնն անգամ. նա մինչև իսկ արգելում է կ. Պոլսի

սում լոյս տեսնող լրագիրներին՝ Պետական Դումայի հաստատման լուրը տալու։

Կ. Պոլսի վերոյիշեալ հեռագիրը հաղորդում է նոյնպէս, որ Երիտասարդ Թուրքերը նախանձում են այսօր ռուս ժողովրդի բաղդին։

Բայց նրանք կարող էին նախանձել և երէկ, նոյն իսկ նոյն տխուր ժամանակներում, երբ ծաղկում էր Պլեվէի քաղաքականութիւնը։ Աշխարհի վրա երբեք չէ եղել մի անկիւն, որ իր սարսափով, իր մահաշունչ մթնոլորտով ոչ թէ նմանվէր, այլ հեռաւոր նմանութիւնը տար Աբդիւլ Համիդի բռնակալութեան։

Որովհետև այն՝ ինչ կոչվում է օսմանեան պետութիւն, մի զարհուրելի դժոխք է, գուցէ աւելի մռայլ, աւելի ողբերգական քան կարողացել է երևակայել Դանտէի հանճարը։ Մարդ հազար անգամ պիտի նախընտրէր կենդանու, անբան անզգայ անասունի կաշուի տակ ապրել, քան զգացող, խորհող, տրամաբանող մարդու մորթի տակ։ Այնտեղ ձեր իւրաքանչիւր քայլափոխին պիտի հանդիպէք այնպիսի պոռացող անարդարութիւնների, այնպիսի ըմբոստացուցիչ բռնութիւնների, որոնք տրորում են մարդկային ուղեղը, սիրտը. պիտի հանդիպէք և լռութեամբ պիտի անցնէք, որովհետև անզօր, բացարձակապէս անզօր էք մի որ և է բան անելու։ Սուլթանական ռէժիմը միայն հային չէ նահատակում. նա աւելի կամ պակաս մոլեգնութեամբ ծանրանում է և ամբողջ ազգաբնակութեան վրա։ Ճիշդ է, արիւն է լալիս հայը, բայց հեծեծում ու կոծում է նաև ամբողջ երկիրը։

Անէծքի, նզովքի, ողբի մի խուլ փոթորիկ է, որ փչվում է Եըլդըզի պալատի անողոք պարիսպներին, առանց հասնելու քաղաքակիրթ մարդկութեան խղճմտանքին։ Եւ եթէ նա, այդ դատապարտվածների ողբը՝ հասնում է երբեմն հատ հատ ազնիւ անձերի, վեհանձն հոգիների ականջին, չէ կարողանում, աւա՛ղ, արդարադատ վրէժխնդրութեամբ զինել եւրոպական պետութիւններին։

Ռուսաստանը, որ իր պատմութեան մէջ մի նոր դարագլուխ է բաց անում, չը պիտի վրդովվի արդեօք հոգևարքի այն ճիչերից, որ բարձրանում են իր սահմաններից մի քայլ այն կողմ, չը պիտի լսէ օգնութեան, գթութեան այն աղիողորմ կոչերը, որ դարերով նահատակված մի ժողովուրդ ուղղում է անընդհատ նրա խղճմտանքին...

Տ. Զաւէն

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Սալմաստ, օգոստոսի 1-ին

Մավի-քանդի և Շաքար-Եազու թալանը տանելուց յետոյ, քրդերը հանդարտված են երևում այժմ։ Իսկ տարված թալանը յետ դարձնելու համար միջոցներ ձեռք չառնվեցին և գնաց ու գնաց, ինչպէս անդարձ կերպով շատ են գնացել այդպիսի թալաններ։— Քրդերի կողմից շարժումը առ այժմ դադարել է, թեև երկիւղը ժողովրդի սըրտից չէ հեռացել։ Հալա քը սակինա, (դեռ սպասեցէք) սպառնացել են թուրքերին քրդերից ոմանք։

Քրդերի ազդած երկիւղը՝ աւելի թուրքերի վրա՝ բացատրելու համար, պէտք արձանագրենք ցերդ չը տեսնված փաստերը. մի Թուրք պաշտօնեայ (որը օտար երկրներում հիւպատոսական պաշտօն է ունեցել) Խոյից Սալմաստ գալու համար դիմում է հայ անձնազոհ համարվածներին, ապահով կերպով տեղը հասնելու նպատակով։ Դարձեալ մի ուրիշ բարձրաստիճան պաշտօնեայ, որը առանձին յանձնարարութիւնով Թաւրիզից Սալմաստ էր եկել, իր գործը վերջացնելուց յետոյ Թաւրիզ յետ դառնալիս՝ ելի հայ-անձնազոհների մի խմբակով ճանապարհի վտանգաւոր տեղերից անցնելու պէտքն է զգում։ Սրան շատերը ուրախալի, պատուաբեր մի երևոյթ են ասում, բայց և ոմանք անձնազոհների չափազանց համարձակ ընթացքը քննադատելի են համարում։

Ասորի-կաթոլիկ եպիսկոպոս Իսահն այժմ Սալմաստից հեռացել է Թաւրիզ։ Այս հեռանալը ոմանք վերագրում են նրա ինքնազգուշութեան, ոմանք էլ պնդում են՝ որպէս թէ միջնորդելու է գնացել Վալիահդի մօտ, որ ավդօյիններին շնորհք արվի վերադառնալու իրանց տեղերը բնակելու և այստեղ Շահին հաւատարիմ կուլլուղ (ծառայութիւն, հնազանդութիւն) անելու, որ այժմ վտարական են եղել դէն-դէս, ոչ մի տեղ ապաստան չը կարողանալով գտնել *)։ Ասում են, որ եպիսկոպոսը միջնորդութեան այս դերով կամենում է սիրաշահած լինել քրդերին, որոնք իրաւացի թէ անիրաւացի մեղադրում են նրան Ջահվար-աղայի Թաւրիզ գնալու և սպանութեամբ պատժելու խնդրում։ Թաւրիզից նոր զօրք և հեծելազօրք են եկել և գալիս են, ի հարկէ, երկրի ապահովութեան համար։ Շնորհիւ այն հանգամանքի, որ պարսիկ զինուորն իրան և իր ձիու սնունդն ինքը պիտի հոգայ ստացած ողորմ ամենօրեայ վճարով (յաճախ անբաւարար) և շնորհիւ բանակում տիրած ոչ խիստ կարգապահութեան նաև շնորհիւ... զինուորները շատ տեսակ բաներ են անում, որ ամեն ազգի ժողովուրդները դժգոհելու պատճառ են ունենում ամեն անգամ։

Յովհ.

*) Քրդերի խաղաղկեաց և մասամբ երկրագործութեամբ պարապող դասակարգը իրանց սեփական տեղերից զրկվելով, շատ թշուառութեան մէջ են, որոնցից նրանք որոնք կողոպտելու, սպանելու վարժութիւն չունեն, թափառում են հայաբնակ կամ թուրքաբնակ գիւղերը և հաց են մուրում անիծելով իրանց բաղդը։

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Խոյ, Օգոստոսի 10-ին

Սրանից շաբաթներ առաջ Պարսիկ կառավարութիւնը պաշտօնապէս արգելած է զէնք կամ ռազմամթերք փոխադրել Անդրկովկաս, բայց հակառակ այդ արգելքին, գաղտնի կերպով այժմ դարձեալ շարունակվում է զէնքերի գնումն պարսկական քաղաքներում և փոխադրումը դէպի այդ տեղերը։ Անցեալ շաբթուն Թաւրիզից Խոյ փոխադրելիս բռնվեցին 9 հրացաններ. իսկ երէկ այստեղ մաքսատան մէջ բռնվեցին ուրիշ 10-ը, 4-ը մօսին 4-ը բերդան և 2-ը մարտին հրացաններ։ Փոխադրողները Եէքենցի Թուրքեր են (Եէքէն մի գիւղ է Արազի մօտերը Պարսկական հողում), որոնք իրանց նպատակը թագցնելու համար առարկում են, թէ այդ հրացանները իրանք գնել են իրանց գիւղի պաշտպանութեան համար։ Մաքսատան կառավարութիւնը խիստ քննութիւն է սկսել այս առիթով։

Նկատելի է նոյնպէս, որ մի քանի օր առաջ Անդրկովկասցի մի քանի Թուրքեր այստեղի վրայով Սալմաստ, Ուրմի են անցել։ Ով գիտէ ինչ կասկածելի նպատակներով։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՑ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ

26 օգոստոսի

ՆԻՒ-ԵՕՐՔ, 25 օգ. Խաղաղութեանն իբր թէ սպառնացող լուրերի առիթով Կօմուրան յայտնեց, որ ոչինչ չէ կարող խանգարել միկադօին ստորագրելու դաշնագիրը։

ՏՕԿԻՕ. 25 օգ. Սպասվում է աւելի մեծ ցոյց։ Իշխանութիւնները աւելի եռանդուն միջոցներ են ձեռք առել։ Կառավարութիւնը ցենզուրայի է ենթարկում հեռագիրները։

ԳՈՒՆՋԺՈՒԼԻՆ, 26 օգ. (սեփ. թղթ.) Օգ. 23-ին ճակատի կողմում հրաձգութիւնները շարունակվում էին։ Խուզարկութեան ժամանակ վիրաւորված է մի օֆիցեր և 2 զինուոր։

ՀԱՄԲՈՒՐԳ, 26 օգ. «Մարիա Րիչմերս» շոգենաւի նաւապետը, որ գնում է Բանգկօկից Բրեմէն, հեռագրում է Կօլօմբօից, որ երեք մարդ մեռան խոլերայից և երկուսը հիւանդացան։

ԼՈՆԴՈՆ, 25 օգոստոսի։ Անգլօ-ճապօնական դաշնագրի բնագիրը կը հրատարակվի երևի ռուս-ճապօնական դաշնագրի վաւերացման հետ միաժամանակ, որ տեղի կունենայ երևի սեպտեմբերի վերջին, երբ Կօմուրան կը վերադառնայ Ճապօնիա։

ԼԻԲԱՎԱ, 26 օգոստոսի։ Յարգված է զինւորական ծովային դատարանի միջնորդութիւնը, որով խնդրվում էր մահվան դատապարտված ծովային զինուորներին ենթարկել տասն և հինգ տարվայ տաժանակիր աշխատանքների։ Ծովային մինիստրը ջնջեց մահվան դատավճիռը։ Երկու ծովային զինուոր դատապարտված են տաժանակիր աշխատանքների առանց ժամանակի, մէկը քսան, մէկը տասն և ութ, երեքը տասնհինգ տարվայ և մէկը տասը տարվայ։

ՕԴԵՍՍԱ, 25 օգոստոսի։ Օչակովյից տասը վերստի վրա ծովը ափ նետեց մի դիակ, որ հագած էր նաւաստի համազգեստ։ Նրա գրպաններում գտնված է ռուսական «Գեօրգի Պօբեդօնօսեց» զրահակրի լէյտենանտ Գրիգօրոկովի անունով, ժամացոյցը և 336 րուբլի։ Գրիգօրկովը ապստամբութեան ժամանակ ինքնասպանութիւն էր գործել։

ՏՕԿԻՕ, 24 օգոստոսի։ «Ճիճիկօ» և բոլոր միացած լրագիրները պահանջում են որ կաբինէտի անդամները հրաժարական տան, այլապէս անկարգութիւնները կը շարունակվեն։ Անգլիական դեսպանատունը մերժեց պահապան զօրք ուղարկելու առաջարկը, գտնելով որ այդ ցոյցը ուղղված է միայն կառավարութեան դէմ։

27 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Նաւթարդիւնաբերողների համաժողովի նախագահ Գապպեն գնահատում է Բագուի անկարգութիւնները, եթէ նրանք շուտով ընդհատվեն, 150 միլիօն րուբլու։ Արդիւնագործութեան կրկին հաստատվելը պահանջում է 9—12 ամիս ժամանակ։ Պէտք կը լինի կառավարական մեծ օժանդակութիւն։ Որովհետև կերօսինի մեծ պաշարներ կան, գները հազիւ թէ բարձրանան, բայց հեղուկ վառելիքը սաստիկ պէտք է թանգանայ։ Նոյն իսկ մեծ գներով դժուար կը լինի ձեռք բերել։

ՆԻՒ-ԵՕՐՔ, 26 օգոստոսի։ Սատօն մամուլի ներկայացուցիչների հետ խօսակցելիս ասաց, որ Ճապօնիան Հեռաւոր Արևելքում կը պահէ այնքան զօրք, որքան և Ռուսաստանը։ Ներկայումս պատերազմական գործողութիւնների վայրում գտնվում են 600,000 հոգի, որոնց յետ տանելու համար պահանջվում է մի քանի տարի ժամանակ։

ՏՕԿԻՕ, 27 օգոստոսի։ Անկարգութիւնները վերսկսվեցին և հասան ծայրայեղ չափի։ Ամբոխը կատաղութեամբ շուռ է տալիս տրամվայները և քանդում է բարիկադները։ Հաշւում են 10 հոգի սպանվածներ և մի քանի հարիւր վիրաւորներ։ Կալանաւորված են մօտ 100 մարդ։ 80 զինուորներ պաշտպանում են ֆրանսիական միսսիայի շէնութիւնը։ Տօկիական մունիցիպալիտետը ընդունեց որոշում, որը դատապարտում է խաղաղութեան պայմանները և պահանջում է պորտսմուտեան դաշնագրի ջնջումը։ Գեներալ Սակումա, բերդապահ զօրքի հրամանատարը հրատարակեց պրօկլամացիա, որի մէջ խնդրում է չը խանգարել ապստամբութիւնը։

ՀՌՈՄ, 27 օգոստոսի։ Երէկ գիշեր ամբողջ Իտալիայում զգացվեցին երկրաշարժի ցնցումներ, որոնք պատճառեցին նշանաւոր վնասներ։ Կան նոյնպէս շատ վիրաւորներ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱՆ

22 օգոստոսի

Բօրսայի դիսկօնտը	$5^1/_2$—$6^3/_4$% »
Պետական 4% ռենտան	$90^1/_4$ — »
I Խաղաղ. տոմսերը	450— — »
II » »	345— — »
III » »	$298^1/_2$ — »
Թիֆլիսի քաղաք. Կրեդիտ. Ընկ.	— — — »
Բագուի » »	— — — »
Թիֆլիսի հող. բանկի 5%	— — — »
» » » $4^1/_2$%	— — — »
Բագուի Նաւթ. Ընկ.	— — — »
Կասպիական Ընկ.	5400— — »
Մանթաշեան և Ընկ.	230— — »
Նօբէլի և ընկ.	10350— — »

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ժամերը նշանակված են Պետերբուրգի հաշւով. իսկ Թիֆլիսինը 58 րոպէ կամ մի ժամ աւելի ուշ պէտք է հաշւել)։

	Փոստ.	Մարդ.	Արագ.	Ապր.
Բագուից դուրս գալը	4.33	12.38	1.18	5.10
Թիֆլիս հասնելը	10.43 առ.	5.51	2.22	11.10
Թիֆլիսից դուրս գալը	11.28	6.39	10...	6.58
(Թիֆլիսի ժամանակով)	12.26	7.37	10.58	7.48
Բաթում հասնելը	12.31	7. 8	8.16	12.42
Բաթումից դուրս գալը	5.55	10. 9	9.33	
Թիֆլիս հասնելը	6.29	10.33	7.39	
Թիֆլիսից դուրս գալը	7.29	11.13	4.59	
(Թիֆլիսի ժամանակով)	8.27	12.11	5.57	
Բագու հասնելը	1.—	4.59	5.46	9.40
Երևանից դուրս գալը	12.25			1.17
Կարսից » »	4.12			5.26
Ալեքսանդրօպօլ »	7.50			3.28
Թիֆլիս հասնելը »	5.24 առ.			2.50
Թիֆլիսից դուրս գալը	11.50 գիշ.			3.48 գ.
(Թիֆլիսի ժամանակով	42.48 գիշ.			2.44
Ալեքսանդրօպ. » »	10.50			6. առ.
Կարս հասնելը	2.20			8.52
Թիֆլիս »	4.48			

Մ. ԿԱՐԱ-ՄՈՒՐԶԱՅԻ
Կար ու ձևի ուսումնարանում ընդունելութիւնը բացվում է 27-ին, իսկ ուսումը սկսվում է սեպտեմբերի 1-ին (Վելեամինօվսկայա և Բեբութօվսկայա փողոցների անկիւն)։ (27,30,2) 1—3

ՋՈՒԹԱԿԱՀԱՐ
Մ. Տ. Վասիլեվ
Առաջարկում է տալ դասեր ջութակ ածելու 90 ր. վարձատրութեամբ ուսումնական տարվայ համար (վարձը կէս տարով), ամսական 14 րուբլի։ Ուսման սկիզբը սեպտեմբերի 1-ից և վերջը յունիսի 1-ին։ Աշակերտների ընդունելութիւնը օգոստոսի 27-ից ամենայն օր ժամը 10—1 և 5—$7^1/_2$ երեկոյեան։ Միասին ածելը և դասեր տներում փոխադարձ համաձայնութեամբ։ Գրիբոեդօվսկայա փողոց, № 5, (օգ. 21, 25, 27, 28, 30 և 31, սեպտ. 1, 2, 4, և 5) 4—10

ՀՐԱՒԷՐ
Նորին Բարձր Սրբազան առաջնորդի կարգադրութեան համաձայն, կիրակի, օգոստոսի 28 ին, ս. պատարագից յետոյ, Թիֆ. Ջգրաշէն ս. Աւետեաց եկեղեցու ս. պ. ծխականներն հրաւիրվում են նոյն եկեղեցի, մասնակցելու ընդհանուր ծխական ժողովին՝ ընտրելու երկու հոգաբարձուներ նոյն եկեղեցու ծխական ուսումնարանի համար։
Գէորգ աւագ քահ. Արուլեանց
Երէցփոխ Ալէքսան Քալանթարեանց
(2. կ.) 2—2

ՀՐԱՒԷՐ
Մողնոյ ս. Գէորգ եկեղեցու հայոց ծխականները հրաւիրվում են նոյն եկեղեցում բարձր սրբազան առաջնորդի հրամանով ընտրելու երկու հոգաբարձու Գայանեան ծխական ուսումնարանի համար, կիրակի, օգոստոսի 28-ին, առաւօտեան 12 ժամին։
2—2 Գրիգոր ա. ք. Տէր-Բարսեղեանց

Արմեանսկ քաղաքի հայոց եկեղեցու համար հարկաւոր է երեք տասարդ տիրացու հետևեալ պայմանով 150 րուբլի ռօճիկ և 250 րուբլի արդիւնք։
Հասցէն՝ Армянскъ, Тавр. губ., Ктитору Капріэлу Мазлумянцу. (2. կ. հ.) 1—3

Կար ու ձևի Ուսումնարան
Օր. Մ. ԱՅՎԱԶԵԱՆԻ
Աշակերտուհիների ընդունելութիւն օգոստոսի 25-ից. հասցէ. Абасъ-Абадская пл. д. № 8 Арутюняна. (հ. 2. կ.) 3—3

ՀԱՅ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ
Հայերէնի դասագիրք հեղինակների կենսագրութիւններով։
Գինն է 1 ր., գումարով առնողներին 20—25% զիջում. դիմել՝ Тифлисъ Коммерческ. учил. Ванціанъ. կամ գրավաճառներին։ (ա.օ) 3—16

Ալէքսանդրապօլի Առևտրական դպրոցի վերատեսուչը սրանով յայտնում է յարգելի պ. պ. ծնողներին և խնամակալներին, որ առաջիկայ ուսումնական տարվայ դպրոցական վերաքննութիւնները սկսվելու են օգոստոսի 20-ից, իսկ նորեկներինը՝ 26-ից. նորեկների խնդիրներ կարելի է տալ դպրոցի դիւանատանը ամեն օր, առաւօտեան ժամը 10-ից 2-ը։
Վերատեսուչ դպրոցի՝ Վասիլի Եֆգավօվիչ Րօմանօվսկի։ (2. չ. ո.) 1—3

Ս. Վ. ԱՐՂՈՒԹԵԱՆ-ԵՐԿԱՅՆԱԲԱԶՈՒԿԻ
Դպրոց-Պանսիօնը եւ Մանկական Պարտէզը
Տեղափոխվում է Սօլօլակ
Պասկեվիչի փող, № 9, տուն Տէր-Աստուածեանի, նախկին III իգական գիմնազիայի կից։
Երեխաների ընդունելութիւնը օգոստոսի 27-ից։
Պարապմունքներն սկսվում են սեպտեմբերի 7-ից։ (հ. 2. հ.) 2—3

Ասխաբադի եկեղեցական-ծխական երկսեռ ուսումնարանի ա. և բ. բաժանմունքների համար հարկաւոր է
ՄԻ ՃԵՄԱՐԱՆԱԻԱՐՏ
ուսուցիչ հայոց լեզուի և Թուաբանութեան, շաբաթական 20—22 դասով, 600 րուբլի ռոճիկով, պատրաստ բնակարանով, վառելիքով և լուսաւորութիւնով։ Ցանկացողները թող դիմեն Асхабадъ Закаспийск. обл. Ктитору армянской церкви Ивану Шаунцеву. 2—3

Լոյս տեսաւ
ՄԱՐԳԱՐ
Հայածանքի Ծնունդ
Քերթուած (պօէմա)
Գինը 20 կոպ.

Թարգմանված է և շուտով լոյս կը տեսնի
И. А. РОЖКОВЪ-ի
О формахъ народнаго представительства
գրքոյկը
Դիմել՝ Баку фотографія И. Меликянца. Маргару. (2.2.) 3—5

ԲԺՇԿԱԳԵՏ

Գ. Ա. ՀԱԽՎԷՐԴԵԱՆ

Մասնագետ միզային և սիֆիլիսաբական հիւանդութիւնների,—ընդունում է հիւանդներին առաւօտեան 12 ժ.—1 ժ. երեկոյեան՝ 6 ժ.—9 ժ.: Կուկիա, Սեմեոնովսկայա փ. № 20. (ե. հ. շ. կ.) 7—30

ԱՏԱՄՆԱԲՈՑԺ

Ս. Գ. Շերմազանեանց

Ընդունում է հիւանդներին ամեն օր առաւօտեան ժամը 9—2 և երեկոյեան ժամը 3—6, Երևանեան հրապարակ, տուն Արղութեան, բնակարան Լալայեանցի բնակարան:

ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒՀԻ

Սոֆիա Ի. Գէլբօրտտ-Լօկշ

Տեղափոխվել է Կաղնաչէյսկի փողոց № 7, տուն իշխ. Թումանովայի, Ալէքսանդրեան այգու դիմաց: (կ.հ.հ.) 36—100

ԲԺԻՇԿ

Լեւոն Օհանջանեան

Մասնագետ միզային, վեներական, սիֆիլիսի և կ. շրջի հիւանդութիւնների: Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.: Կանանց և երեխաների համար 11—12 ժ.: Հասցէն անկիւն Գօլովինսկի պրոսպեկտի և Կաղետսկայա փողոցի, տուն Թամաշեանի: Մուտքը Կաղետսկի փողոցից № 2. (ա. օ.) 9—300

Բժիշկ Գր. Մակարեան

Վերադառնալով Նորոգեց հիւանդների ընդունելութիւնը ներքին և երեխայոց հիւանդներին, ամեն օր ժամը 4-ից մինչև 6 երեկոյեան. Միքայէլեան փողոց, Բերիեվի տուն № 134, տելեֆոն № 907.

(կ. հ. չ.) 4—10

ՀՐԱԻԷՐ

Կիրակի, օգոստոսի 28-ին, առաւօտեան 12 ժամին, Նորին բարձր սրբազնութեան առաջնորդի գլխաւոր հրամանի համաձայն՝ Էջմիածնեցոց ս. Գէորգ եկեղեցու գաւթում լինելու է ծխականների ընդհանուր ժողով՝ նոյն եկեղեցու օրիորդաց ուսումնարանի համար երկու հոգաբարձու ընտրելու: Ուստի սրանով յարգոյաբար խնդրում եմ յիշեալ եկեղեցու ծխականներին որոշած օրը և ժամին ներկայ լինել ժողովին մասնակցելու:

Ներսէս աւագ քահ. Աբովեան
Երէցփոխ Մկրտիչ Գասպարեան

ՀՐԱԻԷՐ

Կիրակի, ամսոյս 28-ին ս. պատարագից յետոյ, առաւօտեան ժամը 12-ին Բարձր Սրբազան առաջնորդի հրամանով Հալաբարի ս. Մինաս եկեղեցու ծխականները հրաւիրվում են ժողովի, ընտրելու երկու հոգաբարձու նոյն եկեղեցու ծխական ուսումնարանի համար: Ուստի խնդրում ենք պ.պ. ծխականներին շնորհ բերել ընտրութեան մասնակցելու:

Սարգիս աւ. քահ. Իգիթեանց

Նորին բարձր սրբազնութեան թեմական առաջնորդի հրամանով կիրակի, ամսոյս 28-ին, Նորաշէնի ս. Աստուածածին եկեղեցում պատարագից յետոյ, ուղիղ ժամը 11-ին, լինելու է ծխականների ժողով՝ ընտրելու 2 հոգաբարձու նոյն եկեղեցու Մարիամեան օրիորդաց դպրոցի համար: Ուստի նոյն եկեղեցու յարգելի ծխականներին հրաւիրում ենք մասնակցելու այդ ժողովին,

Նախագահ ժողովի՝ Սարգիս ք. Շիրոյեանց
Երէցփոխ՝ Ստ. Մնացականեանց

(ո. կ.) 2—2

ԲՕՐՋԱԼՈՒԻ

գաւառի աղնուականների պարագլուխը հրաւիրում է 1) Բօրչալուի գաւառի հողատէրերին, 2) Քաղաքի սահմաններից դուրս անշարժ կայք ունեցողներին, որոնց գնահատութիւնը զեմստվային տուրքերի համար ոչ պակաս է քան 15000 ր., 3) ձեռնարկութիւնների տէրերին, որոնք 1905 թ-ին վերցրել են արդիւնագործական վկայականներ՝ վաճառականական 1 և 2 կարգի և արդիւնագործական 1, 2, 3, 4 և 5 կարգի, ներկայ տարվայ օգոստոսի 29 գալ Մեծ Շուլաւէր, ընտրելու իրանց միջից ներկայացուցիչներ գաւառական խորհրդի համար, որի նիստը նշանակված է օգոստոսի 31-ին քննելու երկրում զեմստվային հաստատութիւններ մտցնելու համար, հաստատելու Նորին Կայսերական Մեծութեան Կովկասի Փոխարքայի հաստատած հրահանգների 31 օգոստոսի 1905 թ. 1—1

Դպրոց եւ Պանսիօն
ՅՈՎՍ. ՄԷԼԻՔ-ԶՀԱՆԵԱՆՑԻ

Ընդունվում են գիշերօթիկ և երեսակ աշակերտներ: Պատրաստվում են բոլոր միջնակարգ դպրոցները մտնելու համար: Նոյնպէս ընդունվում են գիշերօթիկ և այն աշակերտները, որոնք արդէն սովորում են միջակարգ դպրոցներում: Աւանդվում են ռուսերէն, հայերէն, գերմաներէն, ֆրանսերէն և լատիներէն լեզուները: Հասցէն՝ Тифлисъ, Гановская улица № 7. (7,9,11,14,16,18,21,23,25,28,30. ս. 1,4,6,8) 0—15

Աւարտել եմ

գիմազդիայի դասընթացը, վ'ց տարի պարապել դասատուութեամբ, ցանկանում եմ ուսուցչուհու պաշտօն վարել հայ դպրոցներից մէկում. ունեմ պատշաճաւոր վկայականներ (ցենզ): Հասցէս՝ Астрахань, домъ армянск. собора, У. А. Джемшидянцъ. 1—2

Բագուի

ս. Լուսաւորիչ եկեղեցու հաժար ՀԱՐԿԱՒՈՐ են ձայնեղ, հայկական ձայն գրութեան և ժամերգութեան քաջ ծանօթ, հմուտ և փորձված ՏԻՐԱՑՈՒՆԵՐ: Ցանկացողներն իրանց պայմանների մասին կարող են դիմել գործակալին կամ երէցփոխին:

Գործակալ՝ Զաւէն վարդապետ
Երէցփոխ՝ Մինաս Կաճկաճեան

(ու. կ. ե.) 6—6

ՀԱՐԿԱՒՈՐ ԵՆ

Միուսո ցիչեւմի վարժուհի

Սաւրոպոլի հայոց եկեղեցական ծխական մի-դասեան, երկսեռ, վերաբացվող ուսումնարանի համար: Պայմանների մասին տեղեկանալու համար դիմել և խնդիրը ու ուսման վկայականը ուղարկել Губ. гор. Ставрополь ктитору армянской церкви Евагръ Анпеткову. 4—4

Поступили въ продажу новыя книги

Характеристики и воспоминанія

Г. Туманова.

ч. 2-я

Содержаніе: И. И. Свѣдѣнцовъ (Ивановичъ).—В. Л. Величко.—Макс. Горькій на Кавказѣ.—Габр. Сундукіанцъ.—А. Цагарели.—Еще объ А. Казбекѣ и З. Антоновъ.—Д. Ведребисели.—Абг. Іоаннисіани.—Ис. Е. Питоевъ.—С. К. Зубаловъ.—П. Умиковъ.—А. Т. Нанейшвили.—Кн. Н. Д. Мингрельскій.—Итоги недавняго кавк. управленія (кн. Голицынъ).—Изъ театральныхъ воспоминаній.

Ц. 50 коп.

Къ введенію земскихъ учрежденій на Кавказѣ.

Матеріалы, собр. Г. Тумановымъ.

Ц. 20 коп. 2—3

ԻՄ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԲ ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

ԿՐՕՆԻ
ՀԵՏԵՒԵԱԼ ԴԱՍԱԳՐՔԵՐԸ

(Թոյլատրած հոգևոր իշխանութիւնից)

I ուսուցչաց համար.

1. Ուղեցոյց Հին-ուխտի . . . 15—7
2. Ուղեցոյց Նոր-ուխտի . . . 2— 5
3. Ուսուցումն քրիստ. կրօնի Դ. հատոր 1—50
4. Ուսուցումն քրիստ. կրօնի Ե. հատոր — 50
5. Մի քանի խօսք հայ կրօնուսոյցներին — 10

II աշակերտաց համար

6. Դասատետր կրօնի Ա. տարի (11 տիպ)— 20
7. Դասատետր կրօնի Բ. տարի (10 տիպ)— 25
8. Դասատետր կրօնի Գ. տարի (8 տիպ)— 30
9, Սրբազան պատմ. Հին-ուխտի (6 տիպ)— 35
10. Սրբազան պատ. Նոր-ուխտի (5 տիպ)— 40
11. Գործք առաքելոց . . . — 40

Կարելի է դիմել.

1. Ին՛ձ—Тифлисъ, Коммерческое училище.
2. » Книжн. магаз. Гуттенберга.
3. » Центральная книжн. торг.

Ինձ դիմողներն ստանում են. 1) Ուսուցչաց դասագրքերի համար 35%, 2) իսկ աշակերտաց՝ 20% զեղչ (Ա. տարին 25%) Աղքատ դպրոցներին ձրի: Սահակ քհ. Սահակեանց

(չ. ո. կ.) 13—15

ԿԱՐՈՒՑԵԻՒ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

„ՓԵԹԱԿ“
ՕՐ. Մ. ՔԱԼԱՆԹԱՐԵԱՆԻ

Աշակերտուհիների ընդունելութիւնը օգոստոսի 20-ից, առաւօտեան ժամը 9 ից մինչև 4-ը: Ընդունվում են և գիշերօթիկ աշակերտուհիներ: Ցանկացողները կարող են ստանալ ուսումնարանում ժամբաժան ծրագիր ձրիաբար: Архивный пер. д. № 4. (չ.ո.կ.) 6—6

Գուտտենբերգ

գրախանութում վաճառվում են Ղ. Աղայեանցի հետևեալ աշխատութիւնները.

Ուսումն Մայրենի լեզուի, Ա. տարի .	— 15
» » » Բ. » .	— 30
» » » Գ., Դ. և յաջորդ տարիների համար . .	— 70
Ժամանակակից ատենախօսութիւն .	— 20
Որութիւն և Մանուէլ . . .	— 60
Բանաստեղծութիւններ . . .	1 50
Հէքիաթներ, Ա. և Բ. ժող . .	— 30
Տորք-Անգեղ և Հայկանուշ-գեղեցիկ .	— 5
Տարրական ֆիզիկա ըստ Կրիգէրի .	— 84
Ազգային դպրոցների համար առանձին տպված նկարներով	— 30

Գումարով գնողները կը ստանան բաւական զեղչ: 2—4

Հրատարակիչ Անդերսօնի

Բացված է չորս ամսվայ բաժանորդագրութիւն սեպտեմբերից մինչև տարվայ վերջը: 1905 թ. Թիֆլիսում տալիս է ամսվայ ընթացքում չորս գրքոյկ զանազան վերնագիրներով, յայտնի հեղինակների ինքնուրոյն գրուածքներ և թարգմանութիւններ: Չորս գրքոյկը պէտք է բաղկացած լինի 100 ից մինչև 120 երեսից: Մեծադիր: Չորս ամսվայ բաժանորդագին է մէկ բուբլի ճանապարհածախսով:

Հասցէն. Тифлисъ, ул. Броссе № 5. книгоиздатель А. А. Ованесянцъ.

Թիֆլիսում բաժանորդ գրվել ցանկացողները կարող են դիմել Դվօրցովայա փողոց, տուն Ծովանովի, դրասենեակ № 17. 2—2

Նկարիչ Բ. Ճէպէյեանի

Հայկական եկեղեցական ՊԱՏԿԵՐՆԵՐԻ,
ԽԱՉՎԱՌՆԵՐԻ, ԽԱՉԿԱԼՆԵՐԻ
և ոսկեզոծելու արհեստանոց

Ընդունվում են ՄԻՄԻԱՅՆ ՊԱՏՈՒԷՐՆԵՐ. Զուսեոր եկեղեցիներին տրվում է ապառիկ նպաստաւոր պայմաններով. պատուէրները կատարվում են ընտիր

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՇԱԿՈՎ

Тифлисъ, Гановская № 7. Б. Джебяну.

Ցուցակը և պայմանները ուղարկվում է ձրի:

(հ. կ.) 1—5

Դպրոց եւ Պանսիօն
Գ. Լ. ԿՈՒԶԱՆՕՎԻ

Վերսկսում է աշակերտների ընդունելութիւնը օգոստոսի 20-ից: Պարապմունքներն սկսվում են սեպտեմբերի 1-ից: Պանսիոնում ընդունվում են և միջնակարգ դպրոցների աշակերտները, դասերը նախապատրաստելու պայմանով: Երկրորդ յարկ, տուն Իս. Իվ. Աբրահամեանի Վելիկօկնեժսկի փողոց (նախկին Նաբերեժնի) № 9 իսկ Միքայէլեան փողոցից № 34, Վօրոնցովի արձանի մօտ:

(14, 18, 20, 26, 28) 5—5

Վարժուհի, որ գիտէ ֆրանսերէն, հայերէն ու մուզիկա, ցանկանում է դաս ունենալ փոքր ընտանիքի մէջ առանց վարձի, ունենալ սենեակ և բոլորը պատրաստ, պարապել օրը երկու ժամ. угол Троицкой и Графской ул. № 4. верхный этажъ, (հ. կ.) 2—2

Դպրոց եւ Մանկական Պարտէ
Ս. Վ. ԱՐՂՈՒԹԵԱՆԻ

Վերսկսում է աշակերտների ընդունելութիւնը օգոստոսի 25-ից: Պարապմունքներն սկսվում են սեպտեմբերի 1-ից: Միքայէլեան փողոց № 154. (17, 21, 28) 3—3

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԻՒՆԻՑ ՀԱՍՏԱՏՎԱԾ

ԱՌԵՒՏՐԱԳԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Երկու սեռի անձանց համար

(Баку, Прачешная, домъ Теръ-Ованесова)

Կուրսերի նպատակն է տալ ունկնդիրներին մասնագիտական, եւ առեւտրական կրթութիւն եւ պատրաստել հմուտ հաշուապահներ: Աւարտողները ստանում են ատեստատներ:

Կուրսերում աւանդվում են՝ 1) Առևտրական թուաբանութիւն և թուաբանութիւն համրիչի վրա. 2) Հաշուապահութիւն արդիւնաբերական, գործարանական, առևտրական և բանկային. 3) Առևտրական թղթակցութիւն. 4) Առևտրական տնտեսագիտութիւն. 5) Առևտրական և մուրհակային օրէնքներ. 6) Դեղագրութիւն և արագագրութիւն (ուղղագրի). 7) Ուսուցումն գրող մեքենայի վրա: Ուսումն սկսվելու է սեպտեմբերի 20-ից: Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից՝ ամենայն օր կուրսերում առաւօտեան ժամը 9-ից մինչև 12-ը և երեկոյեան 4-ից մինչև 7 ժամը:

Կուրսերի կանոնագրութիւնը (уставъ) և մանրամասն ծրագիրը (программа)—տրվում և ուղարկվում են ձրիաբար: Օտարաքաղաքացիները դիմում են Баку, учредителю коммерческихъ курсовъ А.И. Теръ-Каспарову. (չ. կ.) 15—30

ՀԱՇԻԱՊԱՀ-ՄԱՍՆԱԳԷՏ

(Бухгалтеръ)

Պատրաստում է երկու սեռի անձանց 1) կրկնակի իտալական հաշուապահութեան և հասարակ սիստեմներով, 2) ընդհանուր-առևտրական սիստեմով, 3) բանկային հաշուապահութիւն, 4) առևտրական թուաբանութեան (առևտրական դպրոցի դասընթացք), 5) ֆինանսական հաշուարարութեան, 6) թուաբանութիւն համրիչի վրա, 7) առևտրական թղթակցութիւն, 8) առևտրի պատմութիւն, 9) առևտրական իրաւունք և մուրհակային կանոնադրութիւն:

Հաշուապահութեան երկու սիստեմներն էլ դասաւանդվում են ունկնդիրներին թէ տեսականապէս և թէ գործնականապէս (բանկային հաշուարարութիւնը և առևտրի պատմութիւնը ըստ ցանկութեան): Զբաղմունքը ամեն օր երեկոյեան 5—7 ժամը: Դասընթացքը քառամսեայ է: Հաշուապահութեան դասընթացքն աւարտողներին վկայականներ են տրվում: Վճարն է լիակատար դասընթացքի համար 60 ր.: Պարապմունքներն սկսվում են 1905 թ-ի սեպտեմբերի 10-ից: Հասցէ. А. Г. Саатову 2-я Тумановская ул., д. 17 (въ Кукахъ) 9-դ քաղաքամասում: Ընդունելութիւնը ամեն օր երեկոյեան 4 ից մինչև 8 ժամը, իսկ ուրբերին առաւօտեան 9 ժամից մինչև ցերեկվայ 2 ժամը:

Այս տարի պրոգրամի մէջ մտցվում է ծանօթութիւն հաշուապահութեան և ուրիշ սիստեմների հետ տեսականապէս:

Հաշուապահական բոլոր առարկաներից պատրաստում եմ նոյնպէս և նրանց, որոնք կարող են պարապել երեկոյեան 7-ից մինչև 8 ժամը և սակաւ պատրաստութիւն ունեն սովորական թուաբանութիւնից, ռուսաց լեզուից՝ հաշուապահութիւն սովորելու համար: Դասընթացքը 8 ամսվայ է: Հաշուապահութիւնը աւարտելուց յետոյ տրվում են վկայականներ: Դասընթացքների պրոգրամը տրվում է և ուղարկվում է ցանկացողներին ձրի: (կ.) 7—7 Ա. Գ. Սաատով

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

(Тифлисъ, Сололакъ, Лермонтовская ул. № 9)

Առևտրական Կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ: Աւարտողները ստանում են ատեստատներ:

Աւանդվող առարկաները սրանք են՝ 1) Առևտրական Տնտեսութիւն. 2) Առևտրական Թուաբանութիւն. 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային). 4) Թուաբանութիւն համրիչի վրա. 5) Առևտրական Թղթակցութիւն. 6) Առևտրական և մուրհակի կանոնադրութիւն և 7) Դեղագրութիւն, վատ ձեռքի ուղղելը:

Զրի ուսուցումն ցանկացողներին գրող մեքենայի վրա: Պարապմունքները կուրսերում լինում են ամեն օր:

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից: Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից՝ ամենայն օր, առաւօտեան ժամը 10 ից մինչև 12-ը, և երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլոլակում, Ալէքսանդր Փրիդոնովի տանը № 9, Սերգիեվսկայա և Լերմոնտովսկայա փողոցների անկիւնում: Ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրիապէս կուրսեր հիմնողի բնակարանում: Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, С. П. Мануэльянцу. (կ. չ.) 12—25

Дозволено цензурою. Тифлисъ, 27-го августа 1905 г Տպարան «ՀԵՐՄԷՍ» բնկ. Электропечатная типографскаго Т—ва «Гермесъ». Мад. ул. № 15.